

ԱՆՍԻ ԽԱՅՅԱՆ

ՔԱՌՅԱԿՆԵՐ


891.5

0-47



491 - 29/III 38.





1905 100 100





02.09.2013

9450

29 JUN 2006  
19 NOV 2010

891.5

ՈՍԱՐ ԽԱՅՅԱՄ

D-47

4.

40563  
5001

ՀԻՕԿ

# Ք Ա Ռ Յ Ա Կ Ն Ե Ր

Պարտիկերն բնագրից բարգմանեց  
Ա.ԲՇԱԿ Ա.ԹԱՅԱՆ



Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1936

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ

Պատ. խմբագիր՝ Գ. Սարյան  
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանճյան  
Սրբագրիչ՝ Ա. Յերիցյան

1920  
1921  
1922



Պետրատի տպարան  
Գլխ. լիազոր 111, պատվեր 788  
Հրատ. 3290, տիրած 4,000



Հանձնված է արտադրութեան 1935 թ. մարտի 20-ին  
Ստորագրված է տպագրելու 1936 թ. հունվարի 28-ին



Ա. Ա Ք Ա Յ Ա Ն

Ո Մ Ա Ր Խ Ա Յ Յ Ա Մ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ





Պարսկական ճոխ բանաստեղծութեան փառքը կազմող չոր-  
 րորդութեան (Ֆերդուսի, Խայյամ, Սաադի, Հաֆեզ) մեջ  
 ւերուն տեղ դրալող Հաբիմ Ղեյաս-եղչին-Աբուլ-Ֆաթհ Ռմար  
 երն-Աբրահամ ել-Խայյամի Նեշարուրին, կամ ինչպես ընդուն-  
 ված է համառոտ ասել՝ Ռմար Խայյամը ծնվել է Պարսկաստա-  
 նի Խորասան նահանգի Նեշարուր (Նյուշապուր) քաղաքում մեր  
 առմարի 1040 թվին և վախճանվել է 1123 թ. նույն տեղը՝  
 ապրած լինելով 83 տարի: Այս թվերը գուցէ մոտավոր ճշտու-  
 թյուն ունեն, բայց վոր Խայյամը հասած է յեղել խորին ծե-  
 րութեան, դա կասկածից դուրս է, յերևում է նրա քառյակնե-  
 րից ևս:

Խայյամը ծնվեց այն ժամանակ, յերբ սելջուկները դեռ նոր  
 էլին տիրել Պարսկաստանը, ապրեց և գործեց նրանց տիրապե-  
 տութեան օրով: Սելջուկները մեծապես զարկ տվին իրանց հա-  
 վատակից մահամեղականների (մուսլեմներ) քաղաքակրթական  
 կյանքին: Խայյամը սելջուկները ալք քաղաքականութեանը գու-  
 ցէ շատ է սլարտական: Նա հայրենի քաղաքում ստացալ ժա-  
 մանակի կրթութեանը— սովորեց դրոմնը, հետևաբար և՛ արա-  
 յերեն, ուսումնասիրեց արաբական և սլարսկական դրականու-  
 թյունը (նրա վրա խոշոր ազդեցութեան ունեցան Հոսեյն Էբն-  
 Սենայի կամ յեվրոպականում աղավաղված Ավիսեննայի ստեղ-  
 ծագործութեանները), սկսեց զբաղվել բնական դիտութեամբ,  
 մաթեմատիկայով, տիեզերագիտութեամբ, բժշկութեամբ և այլ  
 դիտութեաններով. արաբական թարգմանութեանները միջոցով

ծանոթացալ նա հռենական դրականութեանը. վոր յայլամբ լալ ծանոթ եր Անակրեոնին և նույնիսկ յայլամբ դիտու յեր-  
զերն Անակրեոնի վորոչ աղգեցութունն են կրում, դրանում  
կասկած չկա:

Սայլամբ բուն դրամունքը բանաստեղծութունը չեր հա-  
մարվում, այլ դիտութունը (սայլամ արարերնն նշանակում է  
վրամագործ, բայց բանաստեղծը դժվար թե այդ մականունը  
դործածելիս լիներ վրանագործ լինելու պատճառով, դուրս նրա  
պապերից վորևէ մեկի արհեստը յեղած լիներ վրանագործու-  
թունը): Ի միջի այլոց՝ յայլամբ 1070-ական թվականներին  
հաստատեց Ջալալի տոմարը, վորը Հուլյանից ավելի ճիշտ է:  
Նա դրել է մաթեմատիկական, աստղարաշխական, բնադիտու-  
կան և այլ աշխատութիւններ (նրա արարերնն ավերբան Յել-  
րոպայում թարգմանվելով՝ դարեր դործ է անվել և շարու-  
նակվում է դործ անվել լիցեոններում վորպէս դասագիրք):

Սայլամբի դերը և՛ համաշխարհային բանաստեղծութեան մեջ,  
և՛ դիտութեան ասպարիզում իրոք խոշոր է: Լալ է բնորոշել  
Սայլամին Ա. Բոլոտնիկովը իր մի ուսումնասիրութեան մեջ.  
«Նա հանճարեղ ու բազմաբանքար մի գիտնական էր, անասու-  
ված ու պոետ, վորի վրա, այդ հասկանալի յե, սոցիալական  
պայմանների անկայունութունը չեր կարող իր կնիքը չդնել:  
Լինելով մատերիալիստ իր աշխարհայացքով՝ նա միաժամանակ  
ծայրահեղ սկեպտիկ է ճանաչողութեան տեսութեան ասպա-  
րիզում և դեդոնիկ՝ ետիկայի ասպարիզում: Նրա հռչակավոր  
«Ռոբայթը» ցայտուն եմոցիոնալ դունավորումով պոետիկական  
սենտենցներէ ժողովածու յե: Իրոք մենք ունենք մի փիլիսոփա-  
յութեան պոպուլյար շարադրութուն, վորի մեջ՝ իհարկէ՛ վո-  
րոշակի արտահայտում է հեղինակի աշխարհայացքի հիմնա-  
կան դիրքավորումը: Համենայն դեպս Սայլամի թե՛ աթէլիմը,  
թե՛ մատերիալիզմը վեր են ամեն կասկածից»:

Սակայն Սայլամին անմահացալ նախ և առաջ իրբով բա-  
նաստեղծ և այն էլ ճանաչվեց նախ վոչ թե Պարսկաստանում՝  
իր հայրենակիցներից, այլ յեվրոպացիները նրան հատկացրին  
իր արժանի տեղ համաշխարհային հանճարների պանթեոնում:  
Մինչև այժմ էլ Սայլամը դրեթէ չի ճանաչվում պարսիկ նույն-

իսկ միջակ ընթերցողներէ կողմից, վորոնք ա՛յնքան լալ են  
ճանաչում Սաադէին, Հաֆէզին, մանալանդ Ջալալ-եղզին Ռու-  
միին: Սայլամը պարսիկ միտն է դալիս միայն լամելիս վոր-  
պէս քեֆի բանաստեղծ, և նրանից զաղվածքներ են բերվում  
ա՛յլ ժամանակ միայն: Պարսիկ ինտելլեկտիւնի արտաքին թե  
այնպէս յերկրորդական բանաստեղծ է համարում Սայլամին.  
այդպիսի կարծիք կազմելու մեջ փոքր դեր չի խաղում և՛ կրո-  
նական շրջանների աղգեցութունը, վորտեղից Սայլամն իսպառ  
վտարված է վորպէս «քաֆար» (հեթանոս):

Սայլամի կյանքի մասին շատ քիչ տեղեկութիւններ ու-  
նենք: Նրան վոչ-ժամանակակից պատմագիրները պատմում են,—  
այդ սուսուպել է թերևս,—թե նրա մանկութեան ընկեր Նեզամ  
ոլ-մուլը, վոր Ալիալանից սողը-աղամ (յեպարքոս) եր կարդ-  
ված Պարսկաստանում, նահանգապետի պաշտոն առաջարկեց  
Սայլամին, բայց վերջինս մերժեց՝ ասելով. «չեմ ուզում իշ-  
խել ինձ նմաններէ վրա», այլ ինդրեց միայն, վոր չխանդարեն  
իրան ազատ ապրել: Անհամարձեղան չէ, վոր այդ արտահայտու-  
թիւնները Սայլամին վերադրվել են հիմնվելով նրա մի քանի  
վոտանավորների վրա, ինչպէս որինակ հետևյալները.—

«Աշխարհիս մեջ՝ յերկու հաց ու մի խորչ նախընտրեցի,  
իշխանութեան և ինչքի տեսչը մի կողմ նետեցի...»

կամ՝

«Յերկու որվան մարդ մի հաց ունենա իր կերակուր  
Յել մի կտորած սափորով թեկուղ մի կում սառը ջուր,  
Ինչո՛ւ դառնա խաղալիք իր նըմանի հաճույքին,  
Ինչո՛ւ պիտի ծառայի իր նըմանին վիղը ծուռ...»

Մի բան պարզ է այնուամենայնիվ, վոր նրա վերաբերմուն-  
քը դեպի իշխանութիւնը ծայրահեղ բացասական էր, հեզնա-  
կան, վորը պարզ յերևում է նրա բաղմամբով զայտակներից:

Սայլամի կյանքի մասին իր ժամանակակիցները տալիս են  
միայն հատուկտոր տեղեկութիւններ իրարից խիտ տարբեր  
դնահատականներով:

Սամարղանդի Նեզամ-ե-Երուզին հաղորդելով իր ծանո-  
թութեան մասին Սայլամի հետ և այն մասին, թե ինչպէս հե-  
տագայում այցելեց նրա շիրիմը, Սայլամի վերաբերմամբ իր



սքանչանքն այս խոսքերով և արտահայտում. «Աշխարհիս յերեսին, բնակված բոլոր աշխարհամասերում, վրչ մի տեղ նրանմանը չեյի տեսել»:

Սայլամի դարում խիստ ազդեցիկ էր սուֆիական աղանդը, կրոնական հախչապետությամբ տարված, մարմնական ծայրահեղ ժուժկալուծյուն պահանջող մուսուլման մի վարդապետություն: Սայլամն իր բե անկրոն քի՛չ հարձակումները չի յենթարկվել այդ սուֆիները կողմից և քի՛չ շանթեր չի արձակել նրանց դեմ իր բաղմաթիվ քառյակներում: Նրա անունը հիշատակված ենք տեսնում շատ սուֆիների դրքերում, ուր նրան վորպես պարսպանք անվանում են «գիտնական», «խայտառակ», «անաստված», «նյութապաշտ», «փելիստիա», «անպատկառ», «հասարակությունից խուսափող», «նեղսիրտ», «արտակարգ հիշտություն տեր», «դեհնի դատապարտված», «գիտական հմտություն և աստղաբաշխական ասպարիդում նմանը չունեցող», «աղատամիտ», իսկ նրա բանաստեղծությունները — «մեղքի և սխալանքների դադաթնակետ», «անպայման ազականություն և անպատկառություն», «կրոնական որենքների դեմ խայթող ոճեր և նենդալից թակարդներ» և այլն:

Սայլամի վրա առաջին անգամ խոր ուշադրություն դարձրեց յեղալ անդլիացի եդ. Ֆիտղ Ջե՛րլը, վորը XIX դարի I կիսում անդլերների թարգմանեց՝ ավելի ճիշտը՝ աղատ փոխադրեց Սայլամի քառյակները (առաջին անգամ տպագրվեց 1859 թվականին): Այնուհետև դրանք բաղմաթիվ անգամ թարգմանվեցին և թարգմանվում են յեվրոպական այլ լեզուներով թե՛ չափածո, թե՛ արձակ: Դրանք չտեսնված հետաքրքրություն և հախչապետությամբ ընդունվեցին Յեվրոպայում, մամալանդ Ամերիկայում, շատերն սկսեցին Սայլամի հետևողություն քառյակներ դրել, առաջ յեկալ դեղարվեստական մի նոր հոսանք «Ոմարիդ» անունով, կատարվել և կատարվում են Սայլամի քառյակների ուսումնասիրություններ, վերլուծումներ, դրվել և դրվում են քննական, լեզվաբանական հոդվածներ, հիմնվել են թե՛ Յեվրոպայում և թե՛ մամալանդ Ամերիկայում Սայլամի ակումբներ:

Մեղ հայտնի յե Սայլամի քառյակները հայերեն յերեք թարգմանություն—Գ. Փառնակինը (Պարիզ, 1904 թ., արտատպված Պոլսում 1922 թ. առանց թարգմանչի անունը հիշելու) —158 քառյակ, Լ. Մեսրոպինը (Պարիզ, 1923 թ.) —242 քառյակ, և Հ. Միրզայանինը (Թեհրան, 1923 թ.) — 193 քառյակ, յերեքն ևլ մեծ մասամբ նույն քառյակները: Փառնակի տաճկահայ բարբառով թարգմանությունը չնայած արձակ և, բայց հաճախ անհարգատ և. կարծես թե այդ թարգմանությունը կատարված և վրչ թե պարսկերենից, այլ վորեկ թարգմանությունից կամ զանազան թարգմանություններից: Լ. Մեսրոպի տաճկահայ բարբառով թարգմանությունն արձակ վրտանալով և, բայց բնազրկ շատ հեռու, աղավաղումներով լի, հաճախ անճանաչելի դարձած. այդ բանին պարզ յերևում և վոր նըւրատել և Մեսրոպի պարսկերեն համարյա բոլորովին չիմանալը: Միրզայանի թարգմանությունը միայն կովկասահայ բարբառով և, հանդավոր, բայց քառյակների ձևը չպահպանված, բաղմաթիվ, ութտողանի:

Ճիշտ և, Սայլամի անունով ժողովածուները մեջ բաղմաթիվ են անհարգատ, վրչ Սայլամի դրչին պատկանող քառյակներ, դա կասկածից դուրս և, բայց մինչև այժմ չի պարզվել, թե վորո՞նք են ոտարամուտները. այդ հարցով զբաղվողները գլխավորապես առաջնորդվել են անճանաչան ճաշակով և յենթադրություններով. որինակ՝ ի նկատի յեն ունենում (պըրոֆ. Ժուկովսկիյ), վոր ամենահին (Բողլեյան կոչվող, 1461 թվականից) ձեռագիրը բաշկացած և ընդամենը 158 քառյակից (թեև դրանում ևս կրկնություններ կան), այլև այն հանդամանքը, վոր վորը քառյակներ (ըստ Ժուկովսկիյ՝ 82 քառյակ) դտնվում են նաև այլ՝ Սայլամից թե՛ առաջ և թե՛ հետո ապրած բանաստեղծների «գլխամներում» և այլն, ապրկություններ, վորոնք ամենևին համոզեցուցիչ չեն: Ուստի անհրաժեշտ պետք և համարել Սայլամի պես կլասսիկ անունով գոյություն ունեցող քառյակները ամբողջական թարգմանությունը և ապադային թողնել հարադատն անհարգատից դատելը, յեթե միայն դա հնարավոր կլինի յերբեկից. պետք և ի նկատի ունենալ մանավանդ այն հանդամանքը, վոր կարևորը



Պայյամի անունը չէ, այլ նրա կամ նրա անունով դոյություն ունեցող դործը, ինչպես այդ իրավացի կերպով նկատում է նաև Ա. Բոլոսնիկովը:

Ահա այդ ամբողջական\*) թարգմանությունն է, վոր յես կատարել եմ, բայց և այնպես յերեք մասի բաժանելով, առաջնում ղետեղելով ա՛յն քառյակները, վորոնք Հոսեյն Դանեշի հրատարակության մեջ յենթադրարար համարվում են հարազատ (թվով 239), յերկրորդում տալով ա՛յն քառյակները, վորոնք Դանեշի հրատարակության մեջ յենթադրարար համարվում են կասկածելի (թվով 146), և յերրորդում մնացածը (թվով 442), ընդամենը 827 քառյակ (ներկա հրատարակությամբ լույս է տեսնում միայն 400 քառյակ, այն է՝ I մասն ամբողջովին (239), II մասից 47 քառյակ և III-ից 114 քառյակ): Իհարկէ՛ հիմք չկա պնդելու, թե այդ բաժանումը ղեթ մոտավորապես ճիշտ է, վորովհետև յենթադրարար Պայյամինը չհամարվող քառյակների մեջ կան այնպիսիները, վորոնք սակայն նրանն են համարվել թեկուզ նրա մտաւանից մի հարյուր տարի անց. այլև դրանցում քիչ չեն այնպիսիները, վորոնց արժանիքներին, վորոնն, արսահայտության ձևերին յեթե նայելու լինենք, կտեսնենք, վոր վոչ միայն վոչնչով հետ չեն

\*) Ամբողջական տսում են այն մտքով, վոր ամբողջովին թարգմանել եմ ձեռքիս տակ ունեցած հրատարակություններում ղետեղված բոլոր քառյակները. այդ հրատարակություններն են—Բոմբեյինը, Քեհրանինը, Պոլսինը (Հոսեյն Դանեշի), Բեռլինինը (դոկտոր Ռոզենի) և Հ. Աճառյանի հրատարակած մի բրոշյուրը: Առանձին կարեորություն եմ տվել դէր Թրիգրիս Ռոզենի հրատարակությանը, վորն իր մեջ նորոգում է շատ վարկանտների տարբերությունները, այստ մի յուններից թարգմանել եմ այնպիսի չորս վերջնականների հրատարակության մեջ: Զեռքիս տակ չեմ ունեցել այն Երիտլայի, Վինտիլիզի և Բողլեյան հրատարակությունները, վորոնց տարբերությունները մտաւանիս տակին հիմք չկա պնդելու հրատարակությունն իր ծանոթություններում: Եղանակսմ մկա բնախման յամմա մասի մ

մնում Պայյամին հարազատ համարվող քառյակներից, այլև շատերից շատ ավելի բարձր են: Մյուս կողմից՝ հարազատ համարվող քառյակների մեջ ևս կան համարյա բառացի կրկնություններ, վորպիսի կրկնություններից միայն մեկն է Պայյամինը յերևի: Բոլոր քառյակները յերեք մասի բաժանելով յես միայն պահպանել եմ այն դասակարգությունը, վորին կողմնակից են և՛ Պայյամը լուսարանողներից վոմանք:

Քառյակները դասավորությունը պատահական է: Պարսիկներն հրատարակություններում քառյակները ղետեղված են տողավերջին տառերի այբուբենական կարգով, նույնպես քմածին դասավորությամբ:

Դրքի վերջում բացատրություններ են տրված:



1959  
1000  
1000

4017

Исторический музей

Музей истории



Կրժից գլխին անլընաս  
Լի'ց, ա'րբ, ինձ ե'լ տուր մի թաս,  
Նախ քան իմ ու ջո փոշուց  
Կուժ կըչինեն, ե'յ տողաս<sup>1)</sup> :



Մի' թող շուրջը թախիժ պատե,  
Շեւ կյանքըդ ցաւ, կըսկիժ պատե,  
Սըմի'ր մարդում, ջըրտիին, մինչ  
Քեզ հողն ամեն կողմից պատե :



Կարմիր լալան<sup>2)</sup> ամեն սարի  
Արյունն ե մի շահրիարի.  
Գեանից ծըլող մանուշակը  
Խալ ե յեղել այտին յարի...

1) Ծանոթությունները տես վերջում:





Քանի պիտի մեռնես մի հեղ,—  
Մեռի՛ր մի հեղ, ել ի՞նչ օր նեղ...  
Մի բուռ արյուն, մորթ ու յերակ—  
Արժե՞ դրնել մի բանի անդ...



Քանի մեք սրտով չի ընի կյանք,  
Ել ինչի՞ր յեն պետք մեք հողն ու ջանք.  
Միշտ կարոտ նըստած միտք ենք անուս—  
Ինչո՞ւ ուշ յեկանք, շուտ պիտի դնանք...



Այդքան դուր մի՛ տանջվիր, ուրա՛խ աղբի՛ր,  
Խոսված հույզ այս ճամային խաղա՛ղ աղբի՛ր,  
Քանի վոր այս կյանքը մի շունչ է լիկ,—  
Յենթադրիր թե՛ չըկաս, անկա՛խ աղբի՛ր:



Անչա՛ թառամեցինք, դո՛ւր ճիղ ու ջանք,  
Յերկրնքի մանդաղից բնաջինջ յեղանք.  
Ալա՛ղ, վոր մեր կյանքին դեռ աչք չածած,  
Ուզած կյանք չըտեսած՝ դարձանք անկյանք...



Դաշտի հովի պես, նըման ալիքի՛  
Մեկ որն ել անցավ իմ ու ջո կյանքի...  
Ինձ դա՛ չեմ քաշիլ յերկու որվա հոգս—  
Մեկ՝ անցած որվա, մեկ ել գայիքի...



Վոչ վոք հանդերձյալ կյանք չի տեսել, սի՛րտ,  
Վոչ մեկն այն կյանքից մեղ չի հասել, սի՛րտ...  
Մեր հույսը դրել ենք մի բանի վրա,  
Վորի ձայնն անդամ մարդ չի լսել, սի՛րտ...



Մի դավաթ ե սա խեղճին գովական՞),  
Ճակատին հարյուր համբույր տալու բան...  
Յեւ տիեզերքի բըրուտն այս թասը  
Կերտելով՝ աղա՞ զդեսնում ե նըրան...



Բըրտանոց գնացի այցի որն անցած,  
Տեսա վարպետին անվի մոտ կանգնած՝  
Շինում կըժի վրանթ ու փող, արքայի  
Գանդն ու մուրացկի վոտն իրար խառնած:



Մի բըրուտ տեսա շուկայում յերեկ՝  
Անընդհատ ծեծում կամը դյուրարեկ,  
Իսկ Վազն իր լեզվով ասում եր: «հեռու  
լա՛վ վարովիր, քեզ պես եյի՛ համարժեք...»



Տենչով շուրթըս դրի կըծի շըրթունքին,  
«ինչո՞ւմն ե յերկար ապրելու գաղտնին՝»  
Հարցրի: Կուժն ասաց. «Բեզ պես կյանք եյի,  
Ուստի միացրո՛ւ հեքըդ իմ հեքին...»:



Վե՛ր կաց ու արի՛, յե՛կ սըլախ համար,  
Սըրտովըս լուծի՛ր խընդիրն իմ դըծվար,  
Իե՛ր մի կուժ գինի, խըմենք, քանի դեռ  
Կուժ չեն պատրաստել մեր կավից թըչվառ:



Յերբ մեռնեմ, գինո՛վ դուք լրվացեք ինձ,  
Թաղելիս՝ գինին պատվիրեցեք ինձ<sup>4)</sup>,  
Թե վոր հարության որը կուզեք ինձ,  
Գինետան փոշո՛ւմ վորոնեցեք ինձ:



Խայյա՛մ, նախատինք նա՛ տա աշխարհին,  
Ով վոր խոցված ե կյանքից դըծվարին.  
Դու վինի վողըով խըմի՛ր ապակով,  
Նախ քան ապակին կըզարկվի քարին:



Մեզնից առաջ ել գիշեր ցերեկ կար,  
Յերկինքն իր քանին եր վընասակար...  
Ըզգո՛ւյշ, կամա՛ց գիր վճարդ այդ հողին,—  
Դա թիրն եր կընոջ մի գեղանըկար...



Կանաչն առվաղի ափին դալարած՝  
Ասես հրեշտակի շըրթից ե ծըլած...  
Ըզգո՛ւյշ, վոտ մ՛ի գիր դալարի վըրա,—  
Դա լուսներեսի հողից ե յելած...



Մե՛նք ենք հին ու նոր գինի գընողը,  
Յերկու գարտի<sup>5)</sup> դրախտը ծախսողը:  
Գեանե՞՞ս՝ մեռնելուց ուր պիտի գընաս...—  
Գինին դիր մո՛տըս, գընա՛ ըս հողը...





Աշխարհքում ով կես նըկանակ ունի,  
կամ իրան արժան մի արնակ ունի,  
Վոչ մինի ծառան, վոչ տերն և մինի,  
Թո՛ղ ուրախ ապրի, լավ վիճակ ունի:



Նըրանք, վոր գիտուն ու կըրթված դարձան,  
Լուսավորվածի անուն ըստացան,  
Ճանալա չըդրտան այս մուշ գիշերին,  
Խոսք ու գրույց արին ու քընով անցան...



Սաղի՞), վըտանգվա՛ծ են դալարն ու վարդ,  
Հող և դառնալու մի շաբթից այդ գարդ.  
Գինի՛ վայելիր, վա՛րդ քաղիր, մինչև  
Տեսնես վարդը ջարդ ու դալարը հարդ:



Այս յերկար ճանպով գընացածներին  
Յետ դարձածն ո՛ւր և, վոր մի լուր տար ինձ.  
Տե՛ս, բան չըթողնե՛ս այս յերկու ճանապի  
Գլխին, քանի վոր յետ չես գալ նորին:



Բա՛խտ, ամեն ինչ ես տալիս ժըլատին,  
Ջերմուկ, ջուր, ջրաղաց... իսկ ի՞նչ աղատին...  
Նա իր ընթրիքը գրավով և ճարում...  
Յերևի պետք և թըքե՛լ այդ բախտին:



Ի՞նչ հոգս՝ կա՞, չըկա՞, մարտընչե՞մ, թե՞ չե,  
Խըրդասի՞րտ ապրած կը նընջեմ, թե՞ չե.  
Գավա՛թը լըցրու, քանի հայտնի չե՛  
Շընչած ողը դուրս կը չընչե՞մ, թե՞ չե:



Աշխարհն ապրելու տեղ չե՛ լի քինով,  
Գիտունը թըշվառ, գինովը գինով...  
Յավիդ կըրակը գինով հանդըրո՛ւ,  
Նախ քան հող մըտնես ձեռքիդ միայն հով...



Մի թաս այն գինուց, վոր կյանքն և կյանքի,  
Լի՛ց լի՛ տուր առանց գըլխացալանքի...  
Մեր կյանքը լոկ մի հեքյաթ և միայն,  
Շտապի՛ր, անցնո՛ւմ և կյանքը բերկրանքի...



Մի յեղ յերկընքում՝ Վոչվող Բարձրաստեղ,  
Մեկն ել գետնի տակ թաղնուխած մի տեղ.  
Լա՛վ տես, ինչպե՛ս են յեղան տակն ու վրան  
Մի բուռ եչ բնակվել վարպետ բընիկ ցեղ... 7) :



Վիշտն արհամարհի՛ր, միշտ առաքինի  
Թասով լեի լեցուն վաշե՛լի՛ր դինի,  
Վորթի դըստե՛ր հեռ նըստի՛ր ու բերկրի՛ր,—  
Մաշրը վոր սուրբ է, դո՛ւստընն ինչ կլինի... :



Վարդի փրնջից թարմ կույսի հետ չըստաս  
Ձեռքիցը վարդի փուշն ու դինու թաս,  
Նախ քան Պե վարդի շապիկ պես դարձնի  
Կյանքիդ շապիկը բորենին որհաս :



Մինչև յե՛րբ ընկճվես կյանքի վըշտերից,  
Արցունքն աչքումըդ, սիրտըդ արնալից.  
Գինի՛ վայելի՛ր, սըրտուրա՛խ ապրի՛ր,  
Նախ քան դուրս կերթաս դու այս աշխարհից :



Ուզես տենչերի հետևից կենաս, ✓  
Գիտցի՛ր, ամենից անմաս կը մընաս.  
Նայի՛ր թե ո՛վ էս, վորտեղի՛ց յեկած,  
Տե՛ս ի՛նչ էս անում, ո՛ւր պիտի դընաս... :



Գինի չեն խըմում վոմանք, վոր մեռնեն՝  
Ինչպես կան՝ այնպես հարուժյուն առնեն...  
Մենք սիրածով ու դինով ենք ապրում,  
Վոր հարուժյանը դրանք մեղ հեռ հառնեն) :



Գըրչի դըրածը չի այլադունի,  
Սիրտ մաշելուց զատ վիշտն արդյունք չունի.  
Ամբողջ կյանքիդ մեջ թե արյուն խըմես,  
Սըրտիդ չես տա նոր մի պուլտ արյունի :



Հիմնադըրուժյունն այս թասին վոսիլի՞  
Յեի վախճանն այսպես գեղեցիկ հիմքի  
Գիտնալ չի լինի խելքի զորուժյամբ,  
Կըչուել չի լինի չափով կարծիքի... :





Լուսինը ճեղքեց քողը գիշերվան,  
 Խըմի՛ր, չես գըտնի այսպիսի վայրկյան,  
 Ուրախ կաց, մի՛տ բեր, վոր լուսինը գեռ  
 Շատ և փայլելու... մեր հողի վըրան...



Խընդացող սիրտը վըշտով մի՛ խաչիր,  
 Լավ որըթ թախծի քարով մի՛ մաչիր,  
 Ով գիտի՛ կյանքում ի՛նչ կը պատահի,—  
 Գինի՛, սեր՛ սիրիր ու հանգի՛ստ քաչիր...



Գինին մի՛ թողնիր, յեթե գինի կա.  
 Հարյուր ախտոսանք հետևից կըգա...  
 Բացվել և վարդը, բըլբուլն և վողբում,  
 Ինչպե՞ս սաղ կըգա թողնելը ներկա...



Թըռչնի պես ցանցում բըռնված ենք խարդախ,  
 Կյանքից սըրտարեկ ու միշտ մըտավախ,  
 Մոլորված անդուռն, անանց շըրջանում,  
 Գալու-գընալու մեր կյանքից անկախ...



Մի՛ նայիր մարդու դու ճարտարության,  
 Այլ նայիր նըրա հավատարմության.  
 Տըված խոստումը յեթե կատարեց,  
 Կարծածիցըդ ել մեծ և անպայման:



Սիրտըս միշտ կըպչում և վարդադույն դեմքին,  
 Ձեռըս միշտ կըպչում և գինու բաժակին...  
 Ամեն մասնիկից իմ բաժինըս առնեմ,  
 Նախ քան մասնիկներս կըպչեն ամենքին...



Գինեղուրի լավ որի չեմ կարող հասնել,  
 Առանց թաս կոնծելու կրգա որհասն ել...  
 Այն ժամին յես մատաղ, յերբ ույժ չունենամ,  
 Սաղին յերբ ասի թե՛ «ա՛ռ այս մի թասն ել»...



Այն որը, վոր անցավ, բընավ մի՛ հիշիր,  
 Դեռ չեկած վաղվան ցավ հոգսը մի՛ քաչիր,  
 «Ծնվել ես—կըմեռնես»-ն իսպառ մոռացիր,  
 Ձըվա՛րթ կաց և իզուր կյանքըդ մի՛ մաչիր:



Իրապես և վոչ թե այլաբանորեն  
Մենք պուպրիկներ ենք և յեղիկները անուրեն .  
Պարուժ ենք միշտ կյանքի բեմում և մեկ-մեկ  
Մըտնում անեյության արկըղը նորեն . . .



Առաջուց և գըրված՝ ինչ պիտի լինի,  
Գըրիչն էլ լավին ու վատին սիույթ չունի,  
Քո վիճակն ինչ պիտի լինի— վորոչ և,  
Ել գուր հոգն, ել գուր ջանքն ինչ պիտի շինի . . .



Մինչև վոր միաբան ձեռ ձեռի չըտանք,  
Չենք տալու ցընծությամբ վիշտը վոտնատակ .  
Վեր կենանք զվարճանա՛նք մինչև լուսաբաց,  
Լույս շատ-չատ կը բացվի՝ մենք պառկած անկյանք . . .



Նըրանք, վոր սովոր են խելքները լարեն,  
Ախոս՝ յեզ են կըթում կովի վոխարեն . . .  
Լավ չե՞ վոր հազնեն նոր պարզամըտի շոր,  
Քան տըհաս խելքներով դինի վաճառեն :



Անձըդ այդ հողսերին ապարդյուն մի՛ տա,  
Անցյալի հողսերի մեզ անուն մի՛ տա,  
Այլ բանի սիրտ չըտա՛ս փերու վալսից դատ,  
Գինով կաց ու կյանքըդ գուր քամուն մի՛ տա :



Նըրանք, վոր ծընվել են խելքները պլխին,  
Տըրվել են զվարճության, քաղցրին, նազանքին,  
Կոծեկ են բաժակը և անհուշ դարձել,  
Գըրկել և մըշտընջյան խոր քունն ամենքին :



Աշխարհի մատյանի ակիդը-վանկը սեր և,  
Մեռածին որհներդող մաղթանքը սեր և .  
Ո՛վ դո՛ւ, վոր տեղյակ չես անրո աշխարհից,  
Այս իմա՛ստն իմացիր, վոր կյանքը սեր և :



Մերած ընկերները ձեռքից դընացին,  
Որհասի վոտքի տակ ընկած մընացին,  
Այս կյանքի խընջույթում մեկ յերկու-յերեք  
Բաժակով մեզնից ել ավել հարբեցին . . .<sup>10)</sup>





Սիրարս միշտ վարդակերպ դեմքի յե հարվում,  
 Զեռքս ել միշտ գինու թասի յե փարվում...  
 Իմ մասն ամեն բանից առնեմ, մասերըս  
 Նախ քան թե ամբողջից հեռու յեն տարվում:



Վալրառում, վորի վերջն ասել դըժվար է,  
 Խըմի՛ր, խըմի՛ր, քանի բըռնության դար է.  
 Մեռնելուդ հերթը յերբ հասնի, «ա՛խ» չանես,—  
 Մի բաժակ, վորից խույս տալ անհընար է:



Գինետանը մի ծեր տեսա ու ծերից  
 Հարցրի. «լուր չե՞ս տա մեռած անձերից»:  
 Ասաց. «Խըմի՛ր, քեզ պես շատերըն անցան  
 Ու գընացին, բայց լուր չեկավ դեռ վերից»...  
 1



Կյանքըդ մինչ յե՞րբ անձըդ պաշտելով անցնի,  
 «Կա-չըկա»-յի հարցը լուծելով անցնի,  
 Խըմի՛ր, քանի կյանքիդ մահն է հետևում,  
 Լավ է՝ վոր այն քընով կամ գինով անցնի...  
 2



Սըրտումըդ հոգս ու վիշտ դիզած՝ չըմխես՝ս,  
 Ճերմակ արծաթ, դեղին վոսկի վոր կխտես.  
 Նախքան թե ջերմ շունչը սառնի փոխարկվի,  
 Յարիդ հետ կե՛ր,—դուչման կուտի, լա՛վ գխտես:



Վորքա՞ն տըխրես, վոր քո սըրտով չե կյանքը.  
 Տառապանքն է հոգսերի հետևանքը.  
 Սըրտիդ համար մի՛ նեղացնիր աշխարհն այս,  
 Վիճակըդ չի կարող փոխել տանջանքը:



«Զո՞րս-հի՞նդ» հարցով բա՛վ տանջվես զուր, ե՛յ  
 սաղի.

Դըժվար է թե մեկը, թե բյուր, ե՛յ սաղի,  
 Վերջը հող ենք, վի՛նը լարիբ, ե՛յ մոթրեբ,  
 Քամի յենք փուչ, գինի՛ բեր տուր, ե՛յ սաղի <sup>11)</sup>:



Ո՛վ սիրտ, իտե՛հ կյանքն անցնում է վրչտալի,  
 Հոգիդ մարմինըդ կը թողնի, կը հալի,  
 Քանի- մի որ ուրախ ապրիր դալարում,  
 Նախ քան թե քո հողից դալար կը ծըլի:



Վորսորդն անմահ խայծ դընելով իր ծուղակ՝  
Մի վորս բրոնեց և անվանեց բարդ-էյակ.  
Ինչ լավ ու վատ վոր անցնում է աշխարհում,  
Ինքն է անում, մարդուն բըռնում պատրվակ:



Տե՛ր, սիրատարի լուսնի գեղն այն հողեթով  
Ջարդարել էս բուրումնավետ հակինթով,  
Բայց հրամայում էս մեզ նըրան չընայել...  
Նույնն է, - թե ջու՛ր պահել՛ր թեքած անոթով...<sup>12)</sup>



Սըրտումըդ մի՛ գըծիր հույսիդ սահմանր,  
Յեկ միչտ կարդա ուրախության մատյանը,  
Գինի՛ խըմիր, սըրտիդ տենչերը վանի՛ր,  
Կյանքըդ կարճ է, հայտնի յե քեզ այս բանը:



Յարիդ հետ ինչ համդըստանաս վողջ կյանքում,  
Ինչ էլ տեսնես անուշ յերազ վողջ կյանքում,-  
Կյանքիդ վերջին դադար կառնի ամեն ինչ,  
Աշխարհի համն ե՛լ ըստանաս վողջ կյանքում:



Սա՛յլամ, գինով գինովցած էս, ուրախ կաց,  
Վարդերեսի հետ նըստած էս, ուրախ կաց,  
Քանի վերջը վերջ է, հաշի՛ր թե չըկաս,  
Բայց քանի կյանք ըստացած էս, ուրախ կաց:



Հակինթ գինի՛ տուր մըշկահոտ, ե՛յ սաղի,  
Սոսք ու զրույցից փըրկվե՛մ կեղտոտ, ե՛յ սաղի,  
Մի կու՛մ գինի՛, նախ քան իմ ու քո հողից  
Կյանքը շինի գինու անոթ, ե՛յ սաղի:



Յերկու, յերեք հարյուր տարի, թե հաղար  
Ապրես, ի՞նչ ճար, տեսար՝ կյանքի ծայրն հասար...  
Սըքա յեղիր և կամ ծառա, վե՛րջըն ինչ,-  
Վերջը նույնն են յերկուսն, իրար հավասար...  

---



Մինչ յե՞րբ գերի լինենք խելքին բըռնավոր,  
Մեկ չե՞,- ապրած հարյուր տարի, թե մի որ.  
Գինի՛ լըցրու, թասը տուր ի՛նձ, նախ քան թե  
Բըրտանոցում շինեն փոշին մեր սափոր:





Յերկինքն ասաց դադանի սըրտիս ակաջին .  
 «Ինձնի՛ց լըսիր բնության որենքն սուաջին .  
 Պըտույտիս մեջ խառը լիներ թե մատըս ,  
 Վերջ կըտայի նախ պըտույտիս սլահանջին» :



Անցյալ գիշեր մի բըրտանոց դնացի հյուր .  
 Յերկու հաղար կըթեր տեսա խոսուեն-լուռ .  
 ✓ Հանկարծ մի կուժ բարձրացըրեց աղաղակ .  
 «Կուժ կերտո՞ղն ուր ե , ծախո՞ղն ուր , առնո՞ղն ուր» . .



Մարդ չի կարող դադանիքի մեջ թափանցել ,  
 Վ՞նչ ե հողին , մարդ չի կարող այդ ասել .  
 ✓ Հասկացի՛ր , վոր այդ խոսքերին վերջ չըկա ,  
 Հողից զատ այլ կայան մարդ չի ունեցել :



Քընել եյի , մի իմաստուն ինձ ասաց .  
 ✓ «Քընից վոչ վոք յերջանկություն չի ստացած .  
 Ի՞նչ ես քընել , քունը մահ ե , վե՛ր , խըմի՛ր ,  
 Պըզա որ , յերբ քընես՝ մընաս քընացած» :



Վարդի ժամն ե , յե՛կ ասին առվի , մարդը հով ,  
 Յերկու- յերեք հուրի-վերի սլարուհով ,  
 Առա՛ջ բեր թասն ,— առավոտից խըմողը  
 Թե մըղկիթից , թե դրախտից ե սպահով :



Գինի՛ խըմիր , կյանքն անմահական դա յե ,  
 Ջիւլան որվան բընույթն իսկական դա յե ,  
 ✓ Ժամն ե վարդի , գինու , սիրարբ յարերի ,  
 Հըրճվի՛ր մի սահ , կյանքը բընական դա յե :



Լից սո՛ւր գինին ալ ալ սուտակ , ե՛յ սաղի ,  
 Բա՛ց թող շըչից արյունն իր փակ , ե՛յ սաղի ,  
 Այսոր չունեմ գինու թասից մոտ այլ վոք ,  
 Վոր ներսն այնքան լինի հըստակ , ե՛յ սաղի :



Լուսադեմին , ո՛վ յերջանիկ դու իմ ոեր ,  
 Տաղն ըսկըսի՛ր , անուչ գինին առա՛ջ բեր .  
 Չե՞ վոր դալուստն ամրան ու չուն ձըմեռվան  
 Հողն են նետել բյուր Ձամ ու բյուր Խոսրոլներ . . .<sup>19</sup> :



Դրախտում, ասում են, փերի-հուրն անուշ է.  
 Կասեմ- դրախտից խաղողի ջո՛ւրն անուշ է.  
 Ա՛ն այս կանխիկն, ապառիկից ձե՛ն քաշիր,  
 Հեռվից է, վոր թմբուկի սուրն անուշ է:



Մարմինները բնակված յերկնի կամարում՝  
 Գիտուններին են տարակույս պատճառում.  
 Խեղբի թելի ծայրը ձեռից չըթողնե՛ս,  
 Թե չես վարպետ դըլուխներն են իսկ սլարում:



Վոչ ջերմ, վոչ սառն է յեղանակն, — անուշ որ,  
 Վարդի փոշին անձրևն ավել է բոլոր,  
 Բըլբուլն անվերջ դեղին վարդին իր լեղվով  
 Աղերսում է, թե խըմե՛լ է հարկավոր...



Յերկրիս յերեսն անգամ ամբողջ շենցընես,  
 Այն չէ, ինչ վոր մի սիրտ յերջանկացընես.  
 Լավ է շնորհով գերի անես աղատին,  
 Քան թե հազար գերի ազատ դարձընես:



Գինո՛վ նըստիր, դա գանձն է ճոխ Մահմուդի,  
 Վի՛նը լըսիր, — տավիղն է դա Դավուդի.<sup>14)</sup>  
 Ինչ չի յեկել, ինչ վոր անցավ — միտ մի՛ բեր,  
 Ուրա՛խ կաց, ել ի՞նչ կա կյանքում սընտի:



Յե՛կ, սիրելի՛ս, վաղվան հողսին տանք դադար  
 Յեվ այս մի շունչ կյանքը հաշվենք մի ավար,  
 Յերբ վաղն այս հին յերկրից դընանք, կըլինենք  
 Դարեր առաջ մեռածներին հավասար.<sup>15)</sup>



Հե՛յ, յերանի մի վայր լիներ հանդըստյան,  
 Կամ հասցըներ մի վայր յերկար այս ճանպան,  
 Յերանի հույս լիներ, վոր բյուր տարուց հետ  
 Հողի սըրտից կեքնենք սեղի հար նըման...



«Կյանքի գաղտնին, սի՛րտ, թե մի քիչ կիմանաս,  
 Մեռնես՝ յերկնի խորհուրդն անջինջ կիմանաս»...<sup>16)</sup>  
 Այսոր՝ քանի քեզ հետ ես՝ բան չիմացար,  
 Վաղը քեզնից գընաս՝ ել ի՞նչ կիմանաս...





«Անշուշտ», ասում են, «հուրի, դրախտ կը լինի,  
 Այնտեղ մեղր ու գլինի ու կաթ կը լինի»...  
 Մենք, վոր գլինի, յար ենք սիրում, տեղին ե,  
 Քանի վերջում մեր բանն ել այդ կը լինի:»<sup>17</sup>)



Այս դադտնապահ յերկինքն անդութ աննրվադ  
 Ըստանել ե հաղար Մահմուդ ու Այադ. <sup>18</sup>)  
 Խըմի՛ր, քանի նորից նոր կյանք չեն տալու—  
 Ով աշխարհից գընաց՝ գընաց հանապադ...



Կյանքի վոչ մի պարագայից մի՛ վախիր,  
 Ինչ գա՛ կանցնի, գուր ներկայից մի՛ վախիր,  
 Այս մի կանխիկ վայրկյանն ուրախ վայելիր,  
 Անցյալն անցավ, ապագայից մի՛ վախիր:



Աշխարհ տեսար, ինչ ել տեսար— վոչինչ ե,  
 Ինչ ասացիր, ինչ իմացար— վոչինչ ե,  
 Ծայրից թե ծայր աշխարհն անցար—վոչինչ ե,  
 Թե սողալով տանն ել կացար— վոչինչ ե...



Մի հավ տեսա թուսի պտտին, առաջը  
 Քեյքալուսի դանդը <sup>19</sup>), հընչում այս կանչը  
 Դանդին. «ո՛ւր ե ծընծղաներիդ դողանջը,  
 Ավա՛ղ, ու՛ր ե ծընծղաներիդ հառաչը»...



Միչտ սիրահարն արբած խելա՛ն թող լինի,  
 Խայտառակված խենթ— խելագա՛ր թող լինի.  
 Ըզգաստ ենք յերբ, տանջում ե մեզ ամեն բան,  
 Հարբած ենք յերբ, ինչ կա ու կար— թո՛ղ լինի...



Այս սրբաբեցս անուր յեկա յես աշխարհ,  
 Կյանքից տանջված՝ վողբի հասա չարաչար.  
 Քանի նույնն ե կյանքն առանց ինձ, թե ինձնով,  
 Ուրեմն ինչո՞ւ յեկա աշխարհ, ո՞ւմ համար...



Ժամանակի հոլովումից քո մասն ա՛ն,  
 Ուրախության դահին նրատիր ու թասն ա՛ն,  
 Հըլու կամ վոչ՝ նույնն են աստըծու առաջ,  
 Դու աշխարհից հիմա սրբաբեց ուղածն ա՛ն:



Լո՛ւս, քանի վոր յերկրնքի տակ չես վախում,  
 թըշվառ ես այս կյանքում— դարձիր գինեխո՛ւմ.  
 Քանի քո սկիզբն ու վախճանը լուկ հողն ե,  
 Կարծի՛ր հողի յերեսին ես, վո՛չ հողում:



Թեև կարիքն ե ինձ բերել մըղկիթը, ✦  
 Աղոթքը չե սակայն դալուս առիթը.  
 Այստեղ մի որ մի սեջջադե գողացա,  
 Մաշվեց, նորը տանելն ընկավ իմ միտը <sup>20</sup>:



Նոր դարնան դալովը, գնալովը ձըմբան հին՝  
 Մեր կյանքի անիվը հողովում ե ինքնին...  
 Վըշտի տեղ գինի՛ առ, դի բըժիշկն <sup>21</sup>) ասել ե—  
 «Վիշտը թույնն ե կյանքի, հակաթույնն ե գինին»...



Այս կուժն ինձ պես վըշտոտ սիրահար ե յեղած,  
 Յարի վարսին դերի մի անճար ե յեղած.  
 Այն կանթը վոր տեսնում ես կոր նըրա վըղին,  
 Մի թև ե, վոր յարի բուրբ փար ե յեղած...



Այսոր վաղվան որն անորոշ ե քեզ համար,  
 Վաղվան հոգը քեզ համար վիշտ ե անհամար,  
 Սիրտըդ թե խնթ չե, այս լուպեն դուր մի՛ վատնիր,  
 Մնացորդ կյանքի գինն լիմանալ չըկա հընար...



Վարդի դեմքին ամանորի ցողն անո՛ւշ ե,  
 Լայն արոտում յարի դեմքի շողն անո՛ւշ ե.  
 Յերեկն անցավ,— դուր ե լոտսել, դըվարձացի՛ր,  
 Անցած որից չե՞ վոր նոր յեկո՛ղն անո՛ւշ ե:



Հեզ մարդկության բաժին ընկած չարն ու բարին,  
 Նրան վիճակված յերջանկություն, ցավ դըժվարին  
 Մի՛ վերադրիր դուր յերկրնքին, վոր բյուր անդամ  
 Գեղնից թույլ ե գլխակցության ճանապարհին:



Այն սուտակը, զուտ ապակու մեջ լինի, բե՛ր,  
 Ընկերն ամեն մի աղասի արժանի՛ բե՛ր,  
 Քանի վոր լավ գիտես, վոր հող—դավեշտ աշխարհն  
 Ինչպես քամի կանցնի—կերթա, յե՛կ, գինի՛ բեր:





Միշտ լավությո՛ւնն արա շըլ՛այտոներին արի,  
 Հիմքից քանդի՛ր աղոթք ու ծոմ, տո՛ւր ավերի,  
 Ուղիղ խոսքը լըսի՛ր մմար Խայրամիցը,—  
 Յեղի՛ր հարբող ու ավաղակ, արա՛ բարի:



Վորքա՞ն մաշվես ադահության, մարմնիդ համար,  
 Զուր վաղվրդես այս աշխարհի շուրջն անդադար.  
 Գընացին, ու գընում ենք, ե՛լ կըզան— կելթան՝  
 Վոչ մի վայրկյան չասլրած կյանքով սըլտին հար—  
 մար...



Աշխարհ գալու ու գընալու պըտո՞ւղն ուր է,  
 Յեվ մեր կյանքի թելի կըծիլի գըլո՞ւշին ուր է.  
 Յերկինքն այնքան կյանքեր քընքույշ ու փափկասուն  
 Այրում, մոխիր է դարձընում, բայց ծո՞ւխն ո՞ւր է...



Տե՛ր, իմ կալը դո՛ւ յես հունցել, յե՞ս ինչ անեմ,  
 Գըրխակապըս դու յես գողծել, յե՞ս ինչ անեմ.  
 Ինչ լավ ու վատ արարք վոր դուրս գա ինձանից,  
 Իմ ճակատին դո՛ւ յես գըծել, յե՞ս ինչ անեմ:



Մեր պանդոկից ծագին հընչեց աղաղակը.  
 «Հե՛յ, դո՛ւ, մեր խե՛նթ, դու գինետան անառա՛կը,  
 Յե՛լ, բարձրացի՛ր, վոր բաժակը լըցնենք գինով  
 Աւաջ, քանի դեռ չեն լըցրել մեր բաժակը...»<sup>22)</sup>



Այնքա՞ն գինի լըմեմ, վոր յերբ լինեմ հողում,  
 Գինու այս հոտն իմ շիբմից դա, յերբ մի զարթխում  
 Անց կենալիս ճանպով հասնի հողիս գըլխին,  
 Նո՞ր իմ գինու հոտից հարբի, ընկնի՞ դողում:



Ո՛վ բարեկամ, մի՛ ախոսա աշխարհը դուր,  
 Կյանքից զատվելն ել մի՛ դարձնի վըշտի աղբոյուր,  
 Հենց վոր անցնի կյանքը, մահն ել չի զղացվելու,  
 Մի՛ վըշտանա կյանքի, մահվան հողսով տըխուր:



Ամպը յեկավ, լացեց սեղի գըլխին ելի.  
 Ապրել գինուց գուրկ վարդագույն չի կարելի.  
 Այս մարդը, վոր ըղբոսավայրն է մեր այտոր,  
 Ո՞ւմը կլինի այն, վոր հենց մեր հողից ծըլի<sup>23)</sup>:



Լալալի <sup>24</sup>) դեմքն ամանորի ամսը լրվաց.  
Վե՛ր կաց, գինի՛ լըցրու դավաթն այս՝ սըրտաբաց.  
Դալարի պես, վոր դրոսավայրն է քո այսոր,  
Կը տեսնեն քո հողից վաղը դալար ծըլած:



Ամանորի ամսով դաշտն իր դեմքը լրվաց.  
Վե՛ր կաց, գինու դավաթին ո՛ւլստ արա սըրտանց,  
Զիվանի հետ գինի՛ խըմիր կանաչ մարդում,  
Հիշի՛ր նըրա՛ն, վորի հողից մարգն է բուսած:



Ատում են, թե դըժոխք կերթա ամեն հարբան.  
Ասեն, բայց յես չեմ ընդունում այդպիսի բան.  
Յեթե սիրով հարբեցողը դըժոխք գընա,  
Դըրախտը լերկ կըտեսնես վաղն ախիս նըման:



Նախ քան կյանքի կատաղության մըրուր խըմենք,  
Այսոր նորից մի՛ն ել գինի բեր, տո՛ւր խըմենք,  
Քանի անիվն այս յերկնային՝ մենք գընալիս  
Դըժվար թե մեզ թողնի գոնե վոր ջուր խըմենք...



Կյանքում մի պահ յես չեմ յեղել առանց գինի,  
Յես հարբել եմ, թեկուզ Ղադեր <sup>25</sup>) գիշեր լինի,  
Շուրթըս թասի շըրթին, կուրծքըս կարասի դեմ,  
Գիշերն ի բուն ձեռքըս վըղին գինամանի:



Ո՛վ սիրտ, կյանքից տուրք անսպասան մի՛ պահանջիր.  
Բախտի խաղից ծայր ու սահման մի՛ պահանջիր.  
Ճար պահանջես, ցավիդ վըրա նոր ցավ կըգա,—  
Ցավին տոկա՛, բընալ դարման մի՛ պահանջիր:



Թե միշտ գինով եմ յես գինով հրաչահամ,—կա՛մ,  
Սիրահար ու գինեպաշտ, փուչ եմ անդամ,— կա՛մ.  
Ինչ թայֆե ինչ ուղում ե՛՛ իմ մասին կարծես,  
Իսկ յես ինքըս ինձ համար հենց ինչ վոր կամ,— կա՛մ:



Մի ունդ տեսա ցըրտին դետնին, նա վոչ քաֆար,  
Վոչ ուղղավառ, չեր ճանաչում կըրոն, աշխարհ,  
«Ճըմարտություն» և վոչ աստված, վոչ ել որենք.  
Յերկու կյանքում <sup>26</sup>) արդյոք իր պես հըրոր ել կա՞ր:





Գինի խրմեղն, ուրախ լինելն իմ կանոնն է,  
 Ամեն կրօնից անկախ լինելն իմ կըրօնն է.  
 Աշխարհ-հարսին յես ասացի. «վո՞րն է ձոնըս».  
 Ասաց. «ուրախ քո սիրառդ ինձ տալիք. ձոնն է» : 27)



Թա՛սըս, սաղի՛, կյանքի բանը մի վայրկյան է,  
 Թե դո՞հ ես այդ մի վայրկյանից, - բավական է.  
 Ուրա՛խ սաղբի՛ր, ինչ էլ լինի՛ այս աշխարհում,  
 Ապրել՛ ինչպես սիրան է ուզում, - չեղած բան է :



Կը վայելեմ, ինչ կարող եմ՝ հաճույք վարդի,  
 Հըստակ գինու, առվի ջըրթի, սիրուն այտի.  
 Վորքան յեղա, - վորքան ել կամ, վորքան լինեմ,  
 Գինի խրմեղ, խըմում եմ ու խըմեմ պիտի :



Վորքա՞ն գույնի, վորքա՞ն բույրի գերի լինես,  
 Վորքա՞ն գեղի ու տըգեղի հարցը քննես.  
 Քե՛ղ Ձեմգեմի աղբյուրն ու ջուրն անմահական 28),  
 Վերջը չե՞ վոր հողի սըրտում պիտի քընես...



Քոֆրից 29) անցնելն անկրօնության մի վայրկյան է,  
 Կասկածելից իրական՝ մի վայրկյան է.  
 Վըշտատարա՛վ այս մի վայրկյանն սաղբի՛ր զը՛վա՛րթ,  
 Կյանքի տուրքը վայրկենական մի վայրկյան է :



Այդի ժամն է, ո՛վ պարզ տըղա, յելի՛ր բընից  
 Յե՛լ ալ դինով այս բյուրեղյա դավաթը լի՛ց,  
 Քանի վոր այս մի փոխ վայրկյանն այս ցավ վայրում  
 Շատ կորոնես, բայց չես կարող գըտնել նորից :



Պարծենկոտնե՛ր, - դուողության մեջ են ընկել,  
 Առանց առթի մոլորության մեջ են ընկել,  
 Չեմ հասկանում թե ի՛նչ գաղտնիք են բաց անում,  
 Վոր քո ուզուց հեռու դրության մեջ են ընկել :



Ռամաղանին պաս եմ կերել - ծոմն ավերել,  
 Չըկարծես թե սըխալմամբ եմ այդ բանն արել.  
 Ծոմի ցավից ոըրս խավա՛ր, եր, կարծել եմ  
 Թե գիչեր է առալոտյան, պաս եմ կերել...



Գինի խրամելն, ուրախ լինելն իմ կանոնն է,  
 Ամեն կրօնից անկախ լինելն իմ կըրօնն է.  
 ✓ Աշխարհ-հարսին յես ասացի. «վո՞րն է ձոնըս».  
 Ասաց. «ուրախ քո սիրտըդ ինձ տալիք. ձոնն է» : 21)



Թա՛սըս, սաղի՛, կյանքի բանը մի վայրկյան է,  
 ✓ Թե դո՛ւ ես այդ մի վայրկյանից, - բավական է.  
 Ուրա՛խ ապրի՛ր, ինչ էլ լինի՛ այս աշխարհում,  
 Ապրե՛լ՝ ինչպես սիրան է ուղում, - չեղած բան է :



Կը վայելեմ, ինչ կարող եմ՝ հաճույք վարդի,  
 Հրատակ գինու, առվի շըրթի, սիրուն այտի.  
 Վորքան յեղա, - վորքան էլ կամ, վորքան լինեմ,  
 Գինի խրամել, խրամում եմ ու խրամեմ պիտի :



✓ Վորքա՞ն դույնի, վորքա՞ն բույրի գերի լինես,  
 Վորքա՞ն գեղի ու տըգեղի հարցը քննես.  
 Քե՛զ Զեմգեմի աղբյուրն ու ջուրն անմահական 20),  
 Վերջը չե՞ վոր հողի սըրտում պիտի քննես...



Քոֆրից 20) անցնելն անկրօնության մի վայրկյան է,  
 Կասկածելից իրական՝ մի վայրկյան է.  
 Վըշտատարափ այս մի վայրկյանն սպրի՛ր դըվա՛րթ,  
 Կյանքի տուրքը վայրկենական մի վայրկյան է :



Այգի ժամն է, ո՛վ սլարզ տըղա, յելի՛ր քրնից  
 Յե՛վ ալ դինով այս բյուրեղյա դավաթը լի՛ց,  
 Քանի վոր այս մի փոխ վայրկյանն այս ցավ վայրում  
 Շատ կորոնես, բայց չես կարող գըտնել նորից :



Պարծենկոտանե՛ր, - դուռդուլթյան մեջ են բնկել,  
 Առանց առթի մուրրության մեջ են բնկել,  
 ✓ Չեմ հասկանում թե ի՛նչ դադտնիք են բաց անում,  
 Վոր քո ուզուց հեռու գըրության մեջ են բնկել :



✓ Ռամաղանին պաս եմ կերել - ծոմն ավերել,  
 Չըկարծես թե սըխալմամբ եմ այդ բանն արել.  
 Ծոմի ցավից ուրըս խալաթ, եր, կարծել եմ  
 Թե գիչեր է առալոտյան, պաս եմ կերել...



☞

Յերկիրնքը, վոր յերկրից յերբեք վարդ չի քաղում,  
Յերանի թե չըփետըրտեր, թաղեր հողում:  
Թե հողն ամալի պես բարձրանար, կըտեսնեյիր,  
Վոր հալիլտայն արյան անձրև ե ցած տեղում...

☞

Թե դիտության դասից խաղառ խուսափես, — լա՛վ.  
Գեղեցկուհու վարսի ծայրից կախ՝ արբես, — լա՛վ.  
Մինչ կըթափի ժամանակը արյունը քո,  
Թունդու արյունը թե թասում դու թափես, — լա՛վ:

☞

Նախ քան գըլխիդ փորձանք բերի մահն անորեն,  
Հրաման տուր, կո՛ւռք, վոր վարդադույն գինի  
բերեն...  
Վտակի չես դու, ո՛վ միամիտ անդիտակից,  
Վոր յերբ գընեն սառը հողում, հանեն նորեն...

☞

Գաղտնիքի սըրբությունն ո՞ւր ե, վոր սիրտ առած  
Ասեմ՝ ինչ ե յեղել առաջ մարդ-արարած...  
Թախիժ պատած, վըշտի շաղախ ե նա յեղած,  
Քանի աշխարհ չըրջած, ապա քայլեր արած:

☞

Նույնն ե- սիրուն ե, թե տըգեղ- մուռ համար,  
Սիրահարի համար գըրժոխք, դըրբախտ դալար,  
Սիրտ կտորածը հադնի դիպակ կամ թե փալաս,  
Սիրահարի գըլխատակին բարձ ե, թե քար...

☞

Յերկրի խորքից մինչև ծայրը Յերևակի  
Լուծել եմ յես հարցերն ամեն տիեզերքի,  
Դուրս եմ յեկել ամեն դավից, ամեն հանդույց  
Լուծել, բացի մահվան հանդույցն այդ յեղակի<sup>30</sup>)...

☞

Յերբ կը մեռնեմ, թող իմ հողը հյուղակ շինեն,  
Դըրբությունըս մարդկանց իբր որինակ շինեն,  
Ապա գըլխիս փոշին գլինով թող շաղախեն  
Յեզ մարմինըս մի կարասի հատակ շինեն:

☞

Թե դարդարեն ամբողջ աշխարհն աչքիդ համար,  
Թե խելք ունես, դու այն յերբեք մի՛ ցանկանար.  
Քեզ պես շատերն անցան, շատերն ել դես կըդան,  
Ալա՛րբդ առ, թե չե՛ կընկնես այլոց ալար...



Ճանաչիս վերա հաղար— մի տեղ ցանց ես քաշում,  
«Քեզ կը բռնեմ,— ասում,— թե վրա դընես  
միջում»...<sup>31)</sup>

Վողջ աշխարհի տընորենը դու յես դարձել,  
Դու յես անում ամենն, ինձ հանցավոր կոչում...



Յերբ մանուշակն իր ըզդեստը կապուշտ ներկի,  
Վարդի թերթին իր մեղեդին սյուզը յերդի,  
Ըզդո՛ւյձ մարդուց, վոր շարմաղի հետ կը խմի,  
Ապա գինու թասը քարին դուր կը գարկի<sup>31)</sup> :



Յերբ չենք լինի՛, աշխարհն, անհունը կըլինի,  
Մեղնից նըչան, վոչ մեր անո՛ւնը կըլինի.  
Սրանից առաջ յերբ չըկայինք, վույթ ել չըկար,  
Յերբ չենք լինի այսուհետ, նույնը կը լինի...



Իբրո՛ւտ, ո՛ւչ դիր, յեթե դդաստ ես, խոսքիս վըրան.  
Վորքա՞ն նետես ցելը մարդուն—տունը վերան.  
Ֆերեյդունի<sup>32)</sup> մատն ու թաթը Քեյ-Նոսորովի՛  
Ի՞նչ ես կարծում՝ այդպես տալով անվի բերան:



Անցյալ որն ել բըրուտներին յես այց արի.  
Ի՞նչ եր գառնում կավը ձեռքում բըրուտների...  
Ինքըս տեսա—թե չի տեսել ամեն մի կույր—  
Իմ հոր փոշին ամեն բըրտի ձեռքում գերի...



Սաղու ջանքով իմ մեջ շընչի նըչան մընաց,  
Մարդկանց դրույցից աններդաշնակ մի բան մընաց,  
Յերեկ խմած գինուց մի թաս չըմընաց գեթ,  
Չեմ իմանում, թե իմ կյանքի՞ց վորքան մընաց...



Սաղի՛, իմ վիշտը բարձրածայն ճիչ է դարձել,  
Գինովությունըս իր չափից շատ է անցել.  
Մաղըս ճերմակ՝ հարբած եմ յես,— ջո սիրուց է;  
Գըլուխըս ծեր, սըրտիս գարունն է նորացել<sup>33)</sup>



Յերկնակամարն աղեղն է մեր մաշված կյանքի,  
Հետքատեղն է Ջիհունը<sup>33)</sup> մեր քամված աչքի,  
Դըրախտը նախադուռն է մեր ըսփոփանքի;  
Դըժոխքը կայծակ հուրն է մեր դուր տանջանքի,





Վարդանոցի այս կյանքում՝ վոչ վոք չհասավ,  
Մինչև կյանքից արտին փուչ-մորմոք չըհասավ:  
Սանրին նայիր, — մինչև վոր հարյուր ճյուղ չեղավ,  
Ձեռը հյուսին սիրունի անհող չըհասավ...



Նայի՛ր, հովից ճեղվել է վարդի փեշն այդին.  
Վարդի գեղից բլբուլի սիրան է խնդադին.  
Նըստիր վարդի չըվաքում, քանի դեռ նա կա,  
Հողից շատ վարդ է ծըլել, հող դարձել կըրկին...



Վարդն ասաց. «Ձրկա բընավ դե՛մք իմ տեսքից լավ»...  
Բայց է՛նչ որ քաչեց, մինչև վարդաջուր դարձավ...  
Բըլբուլն ասաց. «Ո՛վ է, վոր ծիծաղեց մի որ»  
Յե՛վ փոխարենը բոլոր տարին չըլացավ...»



Այս յերկինքն ասես մի դավաթ լինի շըրջուն ընկած,  
Տակն իբրև գերի բըռնըված՝ ամեն գիտուն ընկած...  
Մեկ այս շըշի ու բաժակի սիրո՛ւն դուք նայեցեք, —  
Շըրթունք շըրթունքի, բայց և արանքում արյուն  
ընկած...



Բադին ասում էր ձուկը ջերմի մեջ դալարվելով.  
«Գուցե յետ դառնա այն ջուրն առվով, վոր անցավ  
առվով»...  
Բադն ասաց. «Հենց վոր կըդառնանք յես ու դու  
խորոված,  
Մեզնից յես աշխարհն ինչ կուզի՝ լինի՛ — միրա՛ժ, թե  
ծո՛վ»...



Իմ ու ըո մաքուր հողին մարմինը հենց վոր թողին,  
Կը դընեն յերկու աղյուս իմ ու ըո շիրմի կողին<sup>34</sup>),  
Հետո յերբ ուզեն ուրիշի շիրմին աղյուս դընել,  
Կաղապարելու հերթը կըգա իմ ու ըո հողին...



Վե՛ր, մի՛ վըշտանար ցալովն աշխարհի անցողական,  
Նըստիր և ուրախ վայելի՛ր կյանքի դեթ այս  
ներկան.  
Յեթե աշխարհին կայունությունը հատուկ լիներ,  
Մյուսաների պես քեզ չեր հասնիլ հերթը սովորական:



Թե իմ աշխարհ դալն իմ ձեռին լիներ, յես չեյի դալ,  
 Նույնպէս՝ թե գընալն իմ ձեռին լիներ, չեյի գընալ.  
 Այլևի լավ չե՞ր լինել՝ վոչ դայի, վոչ գընայի,  
 Վոչ վոտ գընեյի յես այս աշխարհում.  
 անհյուրընկալ...



Շըրիթությամբ ըսկըզբում յես ըստացա գոյություն,  
 Զարմանքից դատ կյանքն այլ բան չավելացրեց իմ  
 գալուն.  
 Հիմա գնում եմ ահամա և չըզիտեմ թե ինչ եր  
 Նըպատակն այս իմ գալուն, մընալուն ու գընալուն:



Քանի մարդուս բաժինը յերկրուս այս յերկրի վըրան  
 Այն է՝ վոր սիրտն արյունի, հագին փըչի՝ վոչ այլ  
 բան,—  
 Հանգի՛ստ նըրան, մորից ով ամենևին չի ծընվել,  
 Նըրա սըրտին յերանի՛, ով չի ապրել մի վայրկյան...



Քանի մարդուս բաժինը այս սվերականոցում  
 Վոչ այլ ինչ է, թե վոչ սիրտ մաշել վըշտի  
 հընոցում,—  
 Բյուր յերանի՛ այն սըրտին, վոր աշխարհից շուտ  
 գընաց,  
 Հանգի՛ստ նըրան, ով մընաց անեյության մութ  
 ծոցում...



Յերկու որվան մարդ մի հաց ունենա իր կերակուր  
 Յեկ մի կտորած սափորով թեկուզ մի կում սառը  
 ջուր,  
 Ինչո՞ւ լինի յենթակա իրանից իսկ ըստորին,  
 Ինչո՞ւ պիտի ծառայի իր նըմանին վիզը ծուռ:



Վերցրո՛ւ թանն ու սափորը, ո՛վ իմ սըրտի դու  
 փերին,  
 Շըրջի՛ր նազով դալարի կողմերն, առլի աիերին,  
 Զե՞ վոր այս չար յերկինքը շատ է շինել մերթ բաժակ  
 Յեկ մերթ սափոր քեզ նըման լուսնանըման  
 սըրբերին:



X



Այս յերկրնքի անիվը, մեր զարմանքի առարկան,  
 Ի՞նչ է, թե վոչ մոզական լատերի Նրման մի բան.  
 Արևըն իր ճըրագն է, և տիեզերքը լատեր,  
 Յեվ լատերում պըտըտվող մենք դեմքերին ենք  
 նրման:



Քանի վոր այս կայանում կարճատև է մեր ուղին,  
 Տանջանք է կյանքն ահագին, չըկան յերբ սերն ու  
 դինին.  
 Մինչ յե՞րբ հընի ու նորի հարցով տանջվես, խելո՛ք  
 մարդ,  
 Յես վոր կերթամ, ինձ ի՞նչ փույթ՝ աշխարհըս նո՞ր է,  
 թե՞ հին:



Մի կրոնապետ մի պոռնիկի «հարբած ես» ասաց,  
 «Ամեն վայրկյան սըրա-նըրա կամքին յենթարկված»:  
 Կինն ել ասաց. «Շեյխ<sup>85</sup>), այն եմ յես, ինչ ասում ես  
 դու,  
 Բայց դու ե՞լ ես ցույց տըվածըդ և չե՞ս  
 քողարկված»...



Հավերժական սըտույտից այս անվի անկայան  
 Յերկու տեսակ մարդ է կարող հասկանալ մի բան,—  
 Կամ նա, վոր լավ դիտե նըրա լավը և վատը,  
 Կամ նա, վորը ծանոթ չէ վոչ կյանքին, վոչ իրան:



Քանի ըզգաստ եմ, ուրախությունն է ինձնից դադ-  
 վում,  
 Իսկ յերբ հարբած եմ, հիմարաբար իմ խելըն է  
 շաղվում.  
 Մի կետ կա մեջը հարբածության ու ըզգաստության,  
 Յես մատա՛ղ նըրան, վորից այս կյանքի վարդն է  
 քաղվում:



Առավոտ է, մի վայրկյան մեզ տանք վարդի դույն  
 դինուն,  
 Քարին զարկենք այն շիշը՝ կոչվող սլատիվ ու անուն,  
 Յերկար-յերկար հույսերից միանգամայն ձեռ  
 քաշենք,  
 Մեզ տանք յերկար հյուսերին ու քընարին օրն ի բուն:



Վարպետի մոտ՝ դեռ մանուկ սովորեցինք դըպրոցում՝  
Յեկավ ժամն է՛լ հըրճվելու, վոր մե՛նք դըպրոց ենք  
բացում՝

Խոսքի վե՛րջը լրսիր դու, տես՝ մեր գըլխին ի՛նչ  
յեկավ։—

Հողի վըրա հողածին քամին իր լացն է

լացում... <sup>30)</sup>



Հողի անկողնի միջին քընացողներ եմ տեսնում՝

Հողի տակից դուրս գալու պատրաստվողներ եմ

տեսնում՝

Հավիտենականության դաշտին նայում եմ վորքան,

Վոչ նո՛ր յեկող և վոչ ել գընացողներ եմ տեսնում...  
V



Այս պըտըտուն գըմբեթի <sup>37)</sup> արարքները դու ցած  
տե՛ս՝

Բոլոր բարեկամներից աշխարհն ամայացած տե՛ս,

Յեվ աշխատիր դու ապրել ինքդ քեզ հետ մեն-մենակ,

Վազն ու յերեկ մոռացի՛ր, քեզ ներկային փարած  
տես՝



Այս յերկընքի անխլը մեզ մորմոքելու համար

Մեր ջինջ հողինների դեմ հետին մտքեր ունի չար՝

Նըստի՛ր դալարի վըրա, ո՛վ դու իմ կուռք, քանի վոր

Շուտով իմ ու քո հողից պիտի ծըլի նոր դալար՝



Ո՛վ սիրտ, առեղծփածային գաղտնիքներին չես հասնի,

Գիտուն իմաստունների խորհուրդներին չես հասնի,

Այստեղ գինով, գավաթով գըբախտ շինիր քեզ համար,

Ել ո՞վ դիտե՛ կը հասնե՞ս «մյուս» դըբախտին, չե՛ս  
հասնի:



Մի հարբեցող, վոր թասը կերտեց խըմելու հարմար,

✓ Համաձայնել չի կարող, վոր այն փըշրի մի հիմար՝

Այսքան դեմքեր նազելի ո՞վ ըստեղծեց՝ ո՞ւմ սիրուն,

Ապա փըշրեց ումնի՞ց իր վըրեժն առնելու համար...



Իմացի՛ր, վոր հողուցը պիտի գատվես ու գընաս,

✓ Վարադուրի հետևում <sup>38)</sup> մութով պատվես ու գընաս՝

Խըմիր, քանի չըգիտես թե վո՛ր տեղից ես յեկել,

Հըրճվիր, քանի չըգիտես՝ ո՛ւր կանջատվես ու գընաս:





Խեղքը, վոր բան ե փնտրում ուղիում յերջանկության,  
 նա ինքն ե, վոր ասում ե հարյուր անգամ որական.  
 «Լավ վ ուշ դիր ու հասկացիր կյանքի մասին իմ խոսքը.  
 Պրոսաք վոր ծուռ բուսավ, ծուռ կըմընա  
 հավիտյան»...



Վորոնք յերկինքը տեսած՝ յեկան՝ աշխարհ  
 դարդարեն,  
 Գալիս, գընում են, կըզան ժամանակի հետ նորեն.  
 ✓ Յերկնի փեշում, գետնի տակ արարածներ ինչքա՞ն  
 կան,  
 Վորոնք դարձյալ պիտի դան՝ այս աշխարհում կյանք  
 վարեն:



Կյանքի այս կարավանը զարմանալի յե անցնում...  
 Ձեռքից չըտաս վայրկյանը, վոր բերկրալի յե  
 ✓ անցնում.  
 Ի՞նչ ես հոգում, մատըռալա՛կ, թե վաղն ո՛ւր ես  
 լինելու,  
 Բե՛ր թասն առաջ, տե՛ս, գիշերն անդառնալի յե  
 անցնում:



Աստված վարդի պես թե մեր դոյությունն աշխարհ  
 բերալ,  
 Գիտեր, վոր մեր դործերը լինելու յեն վա՛ա, թե՛  
 Լալ.  
 Ուրեմն առանց իր կամքին վոչ մի հանցանք չենք  
 դործում,  
 Գե՛հնում վերջն այրվելը ել վո՞րտեղից դուրս  
 յելալ...



Ո՞վ որենսդետ, քո սըրտից մե՛րն ե աղնիվ բաբախում.  
 Այսքան խըմած՝ մենք քեզնից շատ խելք ունենք  
 մեր դըլխում.  
 Դու մարդկային արյունն ես խըմում, իսկ մենք՝  
 խաղողի,  
 Խըղճո՛վ դատիր, մեղանից ո՞վ, ո՞վ ե շատ  
 արնախում...



Վոչ մըղկիթին եմ արժան, վոչ կըուստանն եմ  
 հարմար.  
 Աստված գիտե՛ իմ կալին ինչ ե խառնել նա ոտար.  
 Քանի վոր մի անհավատ դարվիչ եմ ու անառակ,  
 Ել ինձ համար ի՞նչ կըրոն, դրախտի ի՞նչ հույս, ի՞նչ  
 աշխարհ...



Կարծի՛ր՝ աշխարհն ուզած կերպ վայելեցիր, վե՞րջըն՝  
ի՛նչ...

Հե՛նց խմացիր կյանքի գերն եւ կարգացիր,  
վե՞րջըն՝ ի՛նչ...

Ասենք՝ սըրտիդ ուզածով հարցուր տարի սուրել ես,  
Կարծի՛ր՝ ուրիշ հարցուր եւ դու սուրեցիր, վե՞րջըն՝  
ի՛նչ...



Ամենեւին չըգիտեմ նա, ով բերավ ինձ հանդես,  
Դըրախտարնա՞կ վորոչեց, թե՞ դըժոխքի վողջակեկ.  
Գինի, քընար, սիրուն յար՝ մարդի յեղըին արևառ,  
Ի՛նձ այս յերեք կանխիկը, իսկ ապառիկ դրախտար  
քե՛զ...



Մի ումպ գինին Քալուսի <sup>19)</sup> պետության հետ չեմ  
փոխի,  
Ղորադի ու Թալուսի <sup>20)</sup> մեծության հետ չեմ փոխի,  
Շըվայտի մի հառաչանքն արշալուսին արձակած՝  
Բարեպաշտի կեղծավոր հեծության հետ չեմ փոխի:



Մինչ յե՞րբ ընկնես մըղկիթի, պասի, ծոմի հետևից,  
Հարբի՛ր գինեաղնեքում չըքավորության ցավից,  
Գինի՛ խըմի՛ր, ո՛վ Սա՛յյամ, քանի վոր կամ մերթ

սախոր,  
Կամ մերթ դալաթ, կամ մերթ կուժ պիտի շինեն քո  
կավից:



Վո՛րն ե վոտն ու վո՛րն ե ձեռ՝ հաղիվ խելքըս  
հասկացալ,  
Վոտն ու ձեռըս կասկըպեց յերկինքն ըստոր  
«սըրտացալ»...  
Ախոո՛ս վոր հաշվի պիտի դընեն մի կյանք  
վաղանցուկ,  
Վոր ինձ համար անդինի, անսիրուհի անց կացալ...



Ախոո՛ս, վոր հիմքը կյանքի մեր ձեռներից դուրս  
թըռալ.  
Վյնքա՛ն սըրտեր փոխարկեց արյան որհասն անխրալ.  
Այն աշխարհից յետ չեկալ մեկը, վոր մեղ մի լուր  
սար,  
Թե այս կյանքից դընացած մարդկանց վիճակն ի՛նչ  
դառալ...  
«Ոմար Սայյամ» - 8





Ախտո՛ւ՛ ջիւլանն որերի պատմութիւնը վերջացաւ,  
 Զըմեռ դարձաւ ծիրանի նոր դարունը, վերջացա՛ւ.  
 Մատղաչութիւնն կոչվող այն ուրախութիւնն

թրուչունք՝

Չեմ հասկանում՝ յե՛րբ յեկաւ, յե՛րբ անունը  
 վերջացաւ... »



Թե դու դինի յես խըմում, հասկացողի՛ հետ խըմիր,  
 Կամ սիրուհու վարդադեմ, ժպտացողի հետ խըմիր,  
 Շատ մի՛ խըմիր, սոյլորույթ, ի ցույց մարդկան մի՛  
 դարձնիր՝

Սակա՛ւ խըմիր ու մերթ-մե՛րթ խըմիր ու անդե՛տ  
 խըմիր :



Գիտե՞ս ինչո՛ւ ամեն որ մինչև դեռ արեւածագ  
 Աքաղաղը բառնում է սրգավորի աղաղակ,  
 Այսինքն՝ «առավոտյան հայելու մեջ տեսնում եմ,  
 Վոր մի գէշեր ել անցաւ կյանքից, լակ դու  
 անտեղյակ»... »



Յերբ որհասի վտարի տակ գըլուխս ցած կորանամ,  
 Կյանքի հույսի արժատից սովկվեմ խպառ ու մընամ,  
 Ըղգո՛ւյշ, բացի սալորից իմ հողն այլ բան չըլինեք,  
 Գուցե գինով յերբ լըցվեմ, նորից նոր կյանք  
 ըստանամ :



Թախտեցի դար ու դաշտ, սար-ձոր ու  
 քար-քարանձաւ,  
 Բանն իմ աշխարհ շըրջելուց դեպի լաւը չըդարձաւ.  
 Ժամանակի վատի մեջ կյանքըս դոնն մի անգամ  
 Յեթե մի սկս լաւ անցաւ, այն ել այնքան լաւ  
 չանցաւ :



Նըրանք, վոր հին են դարձել, նըրանք ել, վոր նոր  
 յեկան, —  
 Յուրաքանչյուրն իր սըրտով չի վազվըղիլ ել այնքան,  
 Աշխարհըս այս վոչ վոքի մընալու չէ հալիտյան,  
 Գընացել են, դընում ենք, նորից կըգան ու  
 կերթան... »



Նա, վոր յերկիրն ու յերկինքն այս տիեզերքում  
 գլորավ,  
 Այնքան մըրմուռ-ցավ թըշվառ սըրտերի խորքում  
 գլորավ,  
 Վորքա՛ն նա ալ շըրթունքներ ու մըշկաբույր  
 գիտակներ  
 Յերկրի թըմբուկ խորքերում, հողի սև գըրկում  
 գլորավ...



Վալ ե գինու գավաթով խինդով քո սիրտը պատես,  
 Յեվ ապառնին, անցյալը մխտըրդ բերել չաշխատես,  
 Յեվ այս ժամանակավոր կյանք անունով գընդանը  
 Առժամանակ ուղեղիդ կասպանքներից ազատես...<sup>38)</sup>



Աշխարհըս տես... նըրանից ի՞նչ շահ եմ տեսել,—  
 վոչի՛նչ...  
 Կյանքի տուրքից ձեռքումըս ի՞նչ ե մընացել.—  
 վոչի՛նչ...  
 Ուրախության ճըրագն եմ,— մարվեց, մընաց ել  
 վոչի՛նչ...  
 Զա՛մի ջամն ել թե լինեմ,— վոր կոտըրվեց,—  
 ել վոչի՛նչ...<sup>40)</sup>



Նախ քան թե քո անունը այս աշխարհից հեռանա,  
 Գինի՛ խըմիր—սըրտիցըդ ամեն կըսկիծ հեռանա,  
 Պաշտած յարիդ հյուաները հանգույց—հանգույց բա՛ց  
 արա,  
 Քո հանգույցի հանգույցը նախ քան քեզից հեռանա:



Այն ժամանակ, յերբ կավն իմ ածում եյին կաղապար,  
 Կավին շատ բան խառնեցին վողորմելի ու թըշվառ.  
 Յես սըրանից ավելի լավ կյանք վարել չեմ կարող,  
 Քանի վոր ինձ հալոցից՝ ա՛յս դուրս բերին լույս  
 աշխարհ...<sup>39)</sup>



Խա՛յրամը, վոր կարում եր խմաստության միշտ  
 վըրան,  
 Հանկարծ այրվեց մի անգամ՝ ընկեելով վըշտի  
 քուրան.  
 Մահվան մըղրատը կըտրեց նըրա կյանքի նուրբ թելը,  
 Յեվ ուրհասի միջնորդը ձըրի վաճառեց նըրան...





Այն պալատում՝ Բահրամն ուր ձեռին գավաթ եր  
 բրունած,  
 Հիմա այծյամն ե ծընել, հանգի՛ստ՝ աղվեսն ե  
 քրնած...  
 Բահրամ, գու վոր «գուռ» եյիր վորսում ամբողջ քո  
 կյանքում,  
 Տեսո՞ր՝ փնչպես մի անգամ ինքը «գուռը» քեզ  
 վորսաց... 41)



Կյանքի մատղաշ տունկը յերբ կըհանվի արմատահան,  
 Յեվ իմ մարմնի մասերը նորեն դառնան ցիրուցան,  
 Յեվ իմ կավից շինելու թե վոր լինեն մի սափոր,  
 Գինո՛վ լըցնեն, գուցե կյանք առնի առաջվա նըման:



Թեև խելքի կարծիքով փողն անպիտան մի բան ե,  
 Բայց անփողի համար ել աշխարհըս մի զընդան ե.  
 Տես, մանուշակըն անգամ դլխահակ ե ձեռնունայն,  
 Բայց, տե՛ս, վոսկու քրսակից վարդն ել  
 խընդարերան ե...



Թորհուրդն անսահմանության վոչ դու կիմանաս,  
 վոչ յե՛ս,  
 Յեվ առեղծված այս բառը վոչ դու կբանաս,  
 վոչ յես.  
 Վարդուրի հետևում 42) խո՞սք կըլինի մեր մասին...  
 Բայց վարդուրն ընկնելիս վոչ դու կըմընաս,  
 վոչ յես...



Մաղի՛, թե հակընթաշուրթ կուռքն ե կողքիս  
 մըշտակա,  
 Թե խաղողի ջըրի տեղ Սեղըրի ջուրն առատ դա,  
 Աստղիկը թե փարուհի լինի, Հիսուն ել ընկեր<sup>43)</sup>,  
 Յեթե սիրտըս տեղը չե, ուրախությո՛ւն ել չըկա...



Հիմա, վոր յերջանկության վարդը բերք ե  
 խոստանում,  
 Չեռըդ գինու գավաթից ինչո՞ւ հեռու չե մընում.  
 Գինի՛ խըմիր, աշխարհը թըշնամիդ ե դալաման,  
 Այսպիսի որ ձեռք բերելն այնքան դյուրին չի  
 լինում:



Առանց գինի ու սաղի կյանք ասածը մի բան չէ,  
 Բարեւունն ել, թե չըկա սրընգի լացը, մի բան չէ.  
 Վորքան վոք յես նայում եմ անց ու դարձին  
 աշխարհիս  
 Վայելքը լուկ հաճույքն ե, մընացածը մի բան չէ...



Ձե'նք առ թասը՝ Նովրուդի <sup>44)</sup> լալայի պես  
 կարմրաչող  
 Լալադունի հեա նրստի'ր աղատ ժամին գործաթող,  
 Գինի' խրմիր յերջանիկ, քանի վոք այս կապուտակ  
 Յերկինքը քեզ ել մի որ դարձնելու յե նըվաստ հող...



Լըցրու բաժակն ա'յն գինուց, վորից որը ձյունաթուլք  
 Սուտակի գուշն սովորեց՝ տալով նըրան իր համբուլք,  
 Այլև վե'ր առ յերկու ուղ ու քե՛քը լուսավորի'ր,  
 Լարի'ր մի ուղը ու այն մյուսը վառի'ր  
 խընկաբուլք <sup>46)</sup> և



Գինի' խրմիր, առանց ընկեր շատ կունենաս  
 Ժամանակ,  
 Յերբ առանց կին ու բարեկամ քընած մնաս հողի տակ.  
 Ըզդո'ւյշ կաց, այս խորհրդավոր գաղտնին մեկին մի'  
 ասի—  
 Յերբ մի անդամ թոռմեց-թոշնեց, ել չի ծաղկի  
 մանուշակ...



Հուրիածին սիրուններին եմ վախադում  
 (ի'նչ կա վոր),  
 Վողջ որն ի բուն խաղողի ջուրն ե իմ ձեռքում  
 (ի'նչ կա վոր)...  
 Ուտի ասում են, թե «գինուց ներում կըտա քեզ  
 աստված»...  
 Չի' տալ... Տա յել, չե'մ ղնդունի յես իմ կյանքում  
 (ի'նչ կա վոր)...



Մի' պահանջեր կյանքից շատ բան, սուրիք ու բա'խ,  
 անկըսկի'ծ  
 Անկա'խ յեղիք ժամանակի բարիքից ու չարիքից,  
 Թո'ղ քո ձեռին լինին դինին ու սիրունի վարսերը,  
 Թե չե չուտով այս մի քանի սրն ել կերթա մեր  
 ձեռքից և





Նըրանք, վորոնք դեռ առաջուց են դընացած,  
 է՛յ սաղի,  
 Գոռողության հողի միջին քուն են մտած, է՛յ սաղի.  
 Դու դեռ գընա գինի՛ խըմիր, ճիշտը լըսիր  
 Ինձանի՛ց,—  
 Քամի յե ըոկ դատարի՛ նըրանց ամեն սոսած, է՛յ սաղի:



Ըստեղծվեցին՝ վորքան սիրուն գույն ու բույր կան՝  
 Ի՛նձ համար,  
 Լալայի պես դեմքն ու բարձրը սոսու նըման—  
 Ի՛նձ համար.  
 Բայց ո՞ւմ համար ինձ նըկարեց իմ նըկարի՛չն  
 անլխձան,  
 Ինձ կյանք տըվալ,— հասկանալի չեղալ ալբ բանն  
 Ինձ համար...



Այս հընորյա իջևանը, վորի անունն աշխարհ է,  
 Խայտաբըղետ, հանդիստ, վոր որ ու գիշերվա  
 Համար է,  
 Խընջույք է սա հարյուրավոր Ձամչիդներեից  
 մընացած,  
 Պալատ, վոր բյուր Բահրամների հանդըստատեղ,  
 դադար է...



Ասում են ինձ. «դինու բաժակ սակա՛վ ձմեռ առ  
 սըրանից,  
 Հո խըմեղու չըկա՞ պատճառ, յեկ ձե՛ն վեր առ  
 սըրանից»:  
 Պատճա՞ռ կուղեն,— դեմքը յարիս լուսադեմին հին  
 գինին.  
 Խըղճո՛վ դատիր, կա՞ ավելի պայծառ պատճառ  
 սըրանից»:



Ուրխտություն մի՛ պահանջիր,— կյանքը շունչ է մի  
 Ժամի,  
 Ամեն մասնիկ աճյունից է Քեյդոբադի ու  
 Ձամի <sup>13, 39</sup> .  
 Այս աշխարհի եյությունը, վյանքըն ինքը հենց  
 վոր կա,  
 Յերազ է ու խաբեյություն, ցալ ու ցընորք, սին  
 քամի:



Այն պալատի, վոր յերկընքին եր հասցըրել իր  
 կըտուր,  
 Արքաների դեմքերն եյին միշտ շոշափում նըրա դուռ,  
 Այն պալատի աշտարակի գլխին տեսա մի ուրուր  
 Թառած՝ վայում եր շարունակ. «ո՞ւր է, ո՞ւր է, ո՞ւր է,  
 ո՞ւր, ո՞ւր... <sup>40</sup>»

*մեկ քոչ աշտարակ*



Ո՛վ սիրտ, ասենք թե աշխարհում վայելեցիր ամեն  
 րան,   
 Կանաչ դալարը դարձարեց սյարտեղը զո խընդության,   
 Չե՞ վոր պիտի լսի մի գիշեր գիշերային ցողի պես   
 Այս դալարին նըստես, ապա ցընդվես ջերմով   
 վաղորդյան:



Գինի՛ խըմեր, վոր քեզանից ամեն կարիք դուրս   
 Հանի,   
 Յոթանասուն յերկու աղբի հողսերն ամբողջ դուրս   
 տանի,   
 Բիմխայից <sup>47</sup>) պաս մի՛ մընար, քանի վոր թե   
 նըրանից   
 Մի ումպ խըմես, սըրտիդ խորքից հաղար վըշտեր   
 կըվանի:



Ե՛ր, աշխարհում ինչ մարդարիտ կա, բոլորի գլու՛ւկ   
 դու սեղ,   
 Գիտե՞ս՝ յերբ ե հողի վառող յեղել գինին   
 կարմրաչեկ   
 Յերկուշաբթի, յերեքշաբթի, չորեքշաբթի,   
 Հինգշաբթի,   
 Ուրբաթ, չաբաթ ու կիրակի, թե՛ գիշեր ու թե՛   
 ցերեկ:



Թագալորի և իշխանի գըլտի մենք թաղն ենք   
 ծախում,   
 Սըընդի կանչի համար մենք մեր կըտալ դըսակն ենք   
 ծախում,   
 Մեղեակիլը, վոր սուրհանդակն ե կեղծալոր   
 քանակի <sup>48</sup>),   
 Հանկարծ մի ումպ գինու համար այդ սուրհանդակն   
 ենք ծախում:



Այլ ճանապ, քան դարվիլինն ե, մի՛ փնտրիր դեպ   
 գինեսուն,   
 Բացի գինուց, յերգից, յարից մի՛ վորոնիր այլ անուն,   
 Գինու բաժակն ու սափորը թող միշտ լինեն զո   
 ձեռքում,   
 Գինի՛ խըմեր, ո՛վ իմ սիրուն, և մի՛ խոսիր   
 ապարդյուն:



Մուրացիկը գինի խըմի, ամիրության <sup>49</sup>) կըհասնի,   
 Աղվեսիկը յեթե խըմի, առյուծության կը հասնի,   
 Ծերը խըմի, — ջահելությունն ե՛ն գըլտից նոր   
 կըսկըսի,   
 Թակ ջահելը յեթե խըմի, փորձ-ծերության կըհասնի:





Գալաթն ու գինին ու մատրովակը և յեղը մարգին,  
Վար կանխիկ են, ի՛նձ, իսկ դու տե՛ր յեղիր

դրախտ—ապառիկին.

Մի՛ լըսիր գրախտի, դըժոխքի մասին խոսքը

վոչ մեկի.

Ո՞վ գընաց դըժոխք, դրախտից ո՞վ յեկավ—բան

պատմե կարգին:



Ո՞վ սիրտ, քանի վոր ճշմարտությունն է

այլաբանությունն,

ի՞նչ ես չըբավոր քաղցի մեջ այդքան պըղտորում

արունն,

Մարմինըդ հանձնիր բախտի՛ն, հարմարվիր ցավի՛ն,

դիմացի՛ր,

Մեկ է, չի՛ դառնալ գըրիչն իր անցած ճանպան քո

սիրուն...



Այս գիշեր թաօըս վոչ պահաս լիտրից լըցնել եմ

ուզում,

Յերկու թաս գինով ինքըս ինձ հարուստ դարձնել եմ

ուզում,

Նախ խեղք ու կրոնին ուղում եմ յերեք ապահարդան

տամ,

Ապա խաղողի աղջկան <sup>91/1</sup> 60) ինձ կին առնել եմ ուզում:



Ուղում եմ բըռնել բարեպաշտության, գըղջումի՛

վեչից

Մաղերս ճերմակ՝ գըրոհ տալ գինու վըրա վողեկից...

Կյանքիս բաժակը հասել է արդեն յոթանասունի,

Հիմա քե՛ֆ չանեմ, բայց ել յե՛րբ անեմ, վոր քե՛ֆ

սազ գար ինձ...



Քանի անընդհատ անցնում է կյանքը, ինչ քա՛ղցըր,

ինչ դա՛ո,

Քանի լըցվում է բաժակը, ճըմե՛ո լինի, թե ամա՛ռ 61),

Սըմի՛ր, քանի վոր ինձնից ու քեզնից հետո շատ

կանցնի

Նորումից լըբման, լըբումից նորման լուսինը

թափառ...



Այս յերկինքը, վոր ցավից դատ այլ՛ բան չի

ավելացնում,

Մի տեղ բան չի դընում, մի՛նչէ մի տեղից չի

պակասացնում:

Դեռ չեկածները չեյին դալ խալառ, թե գիտենային՝

Աշխարհից ի՛նչ ենք քաչում, նա մեզ ի՛նչ թույն է

խըմացնում:



Բընակիչներն այս շիրիմներէ լուռ՝ օղբօտում ու  
 տըխուր—  
 Գարձեւ են վոշի, մի մասնիկն այստեղ, մի մասնիկն  
 այլուր...  
 Ա՛հ, ինչպէս գինին, վորը տակալին չըխամված  
 կարգին՝  
 Գարձեւ է վուչ, դուր, սըբանք էլ ամեն բանից լո՛ւռ,  
 անլո՛ւր...



Տըղէ՛րք, ջանացեք գինու դալաթով ինձ դորացնել  
 Յե՛վ գոհար դարձած այս դեմքըս կարմիր հակինթ  
 դարձընել...  
 Յերբ վոր կըմեռնեմ, գինո՛վ լըվացեք, սպա հո՛ւ  
 տարեք  
 Ոտաղղի վորթից շինած դադաղում ինձ սպառկեցընել:



Քանի իմ կամքով չեք այս աշխարհ դալն առաջին  
 անգամ,  
 Յե՛վ արդար բան չե իմ այս անմուրազ յերթալն ել—  
 անկամ,  
 Վե՛ր կաց ու գոտիդ ամբայրո՛ւ կարգին, ո՛վ կայտառ  
 սաղի,  
 Պիտի աշխարհի ցալն այս գինու մեջ սուղեմ լըվանամ:



Իմ աշխարհ դալուց և վոչ մի ոգուտ ել չունեցա՛վ նա.  
 Գընամ ել, նա վոչ կը գեղեցկանա, վոչ կը ճոխանա.  
 Յե՛վ դույզ ահանջըս մեկից չըլսեց, թե մարդըս ինչո՛ւ  
 Աշխարհ սլտի դա և դալուց ինչո՛ւ սլտի հեռանա...



Եգուց՝ քանի վոր չըգիտենք՝ ի՛նչ որ կարող է մշթնել,  
 Սիրտըդ հըրճվանքով պատի՛ր, աշխատիր վըշտի  
 չըմատնել.  
 Գինի՛ վայելիր լուսնի լուսի տակ, ո՛վ դու իմ  
 լուսին,  
 Լուսինը գեռ շա՛տ կըշողա, բայց մեղ չի կարող  
 գըտնել...





Արարիչը թե աշխարհն ըստեղծեց նստառեկալոր,  
 Ինչն<sup>օ</sup> համար ե մեկ ել վրոխստում ամենն ամեն որ-  
 թե վոր ամեն ինչ լալ ե դուրս յեկել, ինչն<sup>օ</sup> է յե  
 ջընջում,  
 Իսկ յեթե լալ չե, բացի իրանից ո՞վ ե մեղավոր...



Վոմանք տատանման մեջ են հավատի, կըրոնի մասին,  
 Վոմանք վընտրում են, թե ի՛նչն ե ուղիղն, ի՛նչ  
 կասկածելի՞ն.  
 Մեկ ել դարանից հանկարծ դուրս յեկած մուսուլմանիկն  
 ասաց.  
 «Հէ՛յ անտեղյակներ, վոչ ա՛յս ե, վոչ ա՛յն ճըմարտա  
 ուղի՛ն»...



Մինչ յե՞րբ մըղկիթի մուր ու բադինի հուր  
 միտքըդ սլատեն,  
 Դըժոխքի վընաս, դըրբատի շահ քո հանդիստն  
 ընդհատեն.  
 Գընա տախտակի <sup>52)</sup> դըլուխը տես, ուր վարպետը  
 դըրչի՞  
 Ինչ սլատի լինի՞ առաջին ուրը դըբել ե արդեն:



Քանի խելոքի կամքով չի դարձել անիվը բախտի,  
 կուղես՝ յո՛թ հաշվիր յերկինքը, կուղես՝ հասցրու  
 ութի՛ <sup>53)</sup>,  
 Քանի վոր սլատի մեռնենք, սուլոցի սլես տենչերն  
 անցնեն,  
 Ի՞նչ վուլթ— քեղ կուտի մըրջյո՞ւնը շիրմում, թե՞  
 դայլը դաշտի...



Քանի իրակա՞ն հաստատուն մի բան չըկա մեր  
 ձեռքում,  
 կասկածելի հուսով մխոք չունի նստել վողջ  
 կյանքում,  
 Ըղդուչացի՛ր, վոր դինու դավաթը մեր ձեռից  
 չըտանք,—  
 Ըղդաստ, թե հարբած—վ՛նչ տարբերություն  
 տարակուսանքում:

88

Քարին լսիեցի յերեկ յերեկո մի քաչի սալոր<sup>64</sup>)  
 (Յերբ արի յես այդ ըստահակությունն, արբած  
 և յի խոր),  
 Յեւ յյն ժամանակ սալորն անբարբառ լեղիով ինձ  
 ասաց.  
 «Քեզ պես է յի յես, դու ել կըղառնաս ինձ նրման  
 մի որ»...

88

Իրական տեսիլն այս, ո՛վ անդիտակ, վոչընչություն  
 Եւ  
 Յերկնակամարն այս, յեթերն անհատակ  
 վոչընչություն և.  
 Ուրախ կաց, մեկ և, մի շընչի հետ ենք  
 կապված մարդկային  
 Այս ոթեվանում, այդ շունչն և շխտակ  
 վոչընչություն և...

88

A

Հէ՛յ, յերկնի՛ անիւ, քո քենից և այս ավեր-  
 կործանում ✓  
 Անիրավության սուլորությունը հին և քեզանում...  
 Յերկի՛ր, թե կուրծքըդ պատուելու լինեն,  
 յերկընքից դո՛ւված  
 Վորքա՛ն թանգ դո՛հար կը դըտնեն այնտեղ թաղված  
 դիպանում...

88

Թե յես դառնայի աստըծու նրման բախտի դեկավար,  
 Յես կըբառնայի մեջտեղից այս բախտն անդութ,  
 անարդար,  
 Յեւ նորից այնպես յես կըստեղծեյի մի ուրիշ նոր  
 բախտ,  
 Վոր տար աղատին ըղձին հեշտությամբ հասնելու  
 հրնար:



☉

Բըրուսներըն այն, ձեռները վորոնց միշտ ցեխ են  
 փորում,  
 Ցեխին են տըվել իրանց ուշն ու միտք, խելք ու  
 մըտորում,  
 Վորքան վոր բըռունցք, աքացի, ապտակ դարկեն  
 այդ ցեխին,  
 Հասկանա՛ն թող, վոր իրանց հայրերի հոդն են  
 տըրորում:

☉

Բանի վոր մեզ սկես շատերի կյանքը յերկինքն  
 անիրավ  
 Հընձեց ու տարավ, ի՞նչ ոգուտ-կըրել այսքան  
 վիշտ ու ցափ.  
 Բաժակը գինով լըցրո՛ւ, գեր ձե՛ռքս, թե չե մինչ  
 կըրկին  
 Խըմեմ, կըտեսնես, ինչ լինելու յե՛ յեղավ  
 վերջացավ...

☉

Ասում են՝ այնտեղ դըրախտ ու Գուսեր<sup>55</sup>)  
 փրփրուն կըլինի,  
 Յեվ այնտեղ գինով, մեղր ու շաքարով լեցուն  
 կըլինի...  
 Լինում ե՛ լինի՛... Դու թասը գինի՛ լըցրու դեր  
 ձեռքս, —  
 Մի հատ կանխիկը բյուր ապառիկից սիրուն կը  
 լինի...

☉

Թե գինին ածես լերան յերեսին, լեռը կըսարի.  
 Արատավոր ե նա, ով վոր գինին արատ համարի.  
 Դու պահանջում ես ինձանից, վոր յես գինուց  
 ձեռ քաշեմ,  
 Բայց նա վողի յե, վոր մարդուն դարձնում ե  
 մարդավարի...



Աշխարհից ինչ վոր ուտում ես, խըմում, ըս մասն ե  
արդար,  
Յեթե վոր այն ձեռք բերելու համար մըղել ես  
պայքար.  
Բոլոր մընացածն ա՛յլ արժեք ունի. ըղգույշ, վոր  
չընչին  
Գընով չըծախես թանգարժեք կյանքը մնացածի  
համար...



Ուրախ սըրտից հիմա վոր քեզ՝ անունից դատ՝  
բան չըմընաց,  
Այսոր քանի ձեռիդ՝ բացի գինու դավաթ՝ բան  
չը մընաց,  
Ուրախության ձեռք յերբեք գինու թասից մի՛  
հեռացնի,  
Բացի տըհաս գինուց՝ հասուն քեզ հարադատ բան  
չըմընաց...



Տե՛ր, ցաղընկալ կըրծքի՛ս գըթա,  
Գերի հողուս, սըրտի՛ս գըթա,  
Ների՛ր պանդոկ վազող վոտըիս,  
Բաժակակալ ձեռքի՛ս գըթա:

Յերկի՛նք, քեղնից բավական չեմ,  
Թո՛ղ ինձ, բանտի յես արժան չեմ.  
Թե դու սիրում ես հիմարին,  
Յես ել այնքան խելոք բան չեմ...



Կյանքի մատյանից յես Ֆալ բաց արի.  
Սըրտի մըրմուռից տերն այս աշխարհի՞ց)  
Սոսց. «յերանի նըրա՛ն, վոր ունի  
Լուսնի պես յար ու գիշերն ե տարի»...



Յերկինքն այս տանջող՝ բարձըր բուրբից՝  
Չըհանեց յերբեք մեկին ննդ որից,  
Ուր տեսա՛յ մեկին, վոր կըսկիծ ունեք,  
Վըրան ա՛յլ կըսկիծ դըրա՛լ նա նորից:



Կյանքը խելացի՛ մարդկանց հետ կապիր,  
Սնխեղից հեռու՛ փոշիդ թոթափիր,  
Իմաստունը թե քեզ թույն տա,—խըմի՛ր,  
Հիմարից մեղը ել ըստանաս,— թափի՛ր:





Մառադ եմ ըմբոստ, — ներման հույսն ո՞ւր ե...  
 Իմ սիրտը խավար, — բայց քո լո՞ւյսն ուր ե... *✓*  
 Արդարին դրախտ տաս-վարձատրել ե դա,  
 Քո ձրբի շքնորհ-խըրբախո՞ւյսն ուր ե...



Վեր կենամ անապակ գինու հոգս անեմ,  
 Դեմքիս գույնը գինու գույնը դարձնեմ,  
*✓* Անհեթեթ բընույթի տեր այս խելքի վրա  
 Թափեմ մի բուռ գինի ու քընացնեմ:



Ձարդ բաշխելիս հասան յերկնի յերբ թափին,  
 Նրբան տըվին աստղեր, արև ու լուսին.  
*✓* Ճակատագրից մեզ ել բաժին ա՛յն ընկավ,  
 Վոր ինչ ցավ կար, այն ել դըրին մեր վըղին:



Հոգիս, յես ու դու կարկինի յենք նրման, —  
*✓* Յերկու գըլուխ, բայց մի մարմին անբաժան,  
 Շըրջանաձև գըծով պըտույտ ենք դալիս,  
 Մինչև նորից գըլուխներըս միանան:



Յերկինքն ամպից ճերմակ ցողիկ ե թափում,  
 Մարդի գըլխին ասես ծաղիկ ե թափում...  
 Յես ել թափեմ շուշան-թասն այս վարդ-գինին,  
 Մինչ մանուշակ-ամպը հասմիկ ե թափում...



Գինի անուն կըրող վողուց այն անճառ,  
 Վոր համարվում ե խորտակված սըրտի ճար,  
 Յերկու-յերեք լեցուն բաժա՛կ բերեք ինձ.  
 Բարի ջըրի անունն ինչի՞ լինի չար...<sup>87)</sup>



Գինին առած՝ առվի յեղբի՛ն լինեյինք,  
 Վըչալից հեռու նոր ափերի՛ն լինեյինք...  
 Քանի կ՛յանքն ել վարդի նրման տասն որ ե,  
 Վառ շըրթի, թարմ այտի դերի՛ն լինեյինք...<sup>88)</sup>



Սըրբի քուրճը կարասի ծածկ դարձըրինք,  
 Գինետան հոգն ո՞ծումով սըրբացըրինք.  
 Այս դինետան մեջը դուցե թե դըտնենք  
 Կյանքը, վոր այն մըղկիթներում կորցըրինք:



Գինուս սահորը կտորեցիր, տե՛ր աստված,  
 Բեֆիս դուռն իմ դեմ փակեցիր, տե՛ր աստված.  
 Յես եմ խրմում, դո՞ւ յես անում գըժություն...  
 Հո՛ղը բերնիս, թե՞ հարբեցիր, տե՛ր աստված...



Այս աշխարհում ո՞վ չի մեղանչում, ասա՛,  
 Զամեղանչողն ի՞նչպես ե շընչում, ասա՛.  
 Յես վատ անեմ, — դու ել վատով ինձ պատժես, —  
 Տարբերությունն ի՞նչ ե մեր միջում, ասա՛... <sup>68)</sup>,



Վարդի դեմքին ամպլի քող կա տակավին,  
 Սըրտիս խորքում գինու դող կա տակավին.  
 Դեռ մի՛ պառկիր, ժամանակ չե քընելու,  
 Խմի՛ր, հոգյա՛կ, լուսի շող կա տակավին:



Վա՛յ այն սըրտին, վորի միջում դաղ չըկա,  
 Սիբահար չե, խորքում մարած «ա՛խ» չըկա...  
 Այն որը, վոր առանց սիրո կախարտես,  
 Ել քեզ համար որիցն այն փուչ, ձախ՝ չըկա՛...



Ով գինի, չըրթունքն ալ յա՛ր լինի թող սիրուն.  
 Զեռք բերելն ե դըժվար հարվադյուտ այդ փերուն.  
 Նըրանից ե բաժակն ալ գինով յերջանիկ,  
 Վոր ընտրել ե յարի լալ չըրթունքն իր արյուն:



Վարդ չըլինի, փըչե պըսա՛կն ել բալ ե,  
 Լույս չըհասնի, դժոխքի կըրա՛կն ել բալ Ե,  
 Յեթե խարդա, մենաստան, գու՛ք չըլինի,  
 Յեկեղեցին, գոտին, դանդա՛կն ել բալ Ե<sup>69)</sup>:



Նըրանք, վորոնք ձեանում են սուտ ճըգնավոր,  
 Հոգին մարմնից տարբեր բան են հաշվում այսոր...  
 Դեն կըդընեմ գինու քըլքըլոցն այսուհետ,  
 Յեթե գըլխիս կատար դընեն վորպես աքլոր <sup>60)</sup>:



Ղորանը, վոր կարծում են վեհ բանը միակ,  
 Տեսնում ես՝ մերթ կարդում են այն վո՛չ շարունակ.  
 Դարձրո՛ւ թասը—վոտանավորն ե մոգական <sup>61)</sup>,  
 Վոր կարդում են ամեն մի տեղ ու ժամանակ:





✕ Խըմում եմ յես դինին վոչ թե քեֆի համար,  
 Վոչ ել անկրոն համարվելու, ցոփ, անպատկառ,  
 Վոչում եմ յես ինքքս ինձնից մի սլահ լիախէմ,—  
 Ահա ի՛նչն ե իմ խըմելու միակ պատճառ:



Գրչուխս ծեր նեաեց քո սերն իր ծուղակը...  
 Թե չե իմ ձե՞ռն ուր, ո՞ւր դինու այս բաժակը...  
 Սերը լուծեց խելքիս ծընունդ հրաժարումըս,  
 Համբերության շորն ել պատուեց յեղանակը...:



✓ Սիրտըս թըշվառ, խենթ-խելաղար ու վըշտահար  
 Ուշքի չեկալ իմ սիրուհու սիրուց իսպառ...  
 Այն որը, յերբ սիրո դինին բաժանեցին,  
 Իմ բաժակը լըցրին արնով սըրտիս թըշվառ...:



Ո՛վ դու բախտի լախտից նետալած, դեպ ձա՛խ գընա  
 Վորպես գընդակ, դեպ ա՛ջ վաղիր ու լո՛ւռ մընա...  
 Ո՛վ քեղ այդպես դես-դեն քրցեց, նըսպատակը  
 Գրաե միայն նա, նա՛ միայն, նա՛, նա՛, նա՛, նա՛...:



Դարվի՛չ, սրատու՛ր մարմնիդ քողն այդ  
 խայտաճամուկ,  
 Մարմինըդ չի դարձել քանի դդեստիդ ըստրուկ,  
 Աղքատության կարպետը հին նետիր մեջքիդ,  
 Կարպետի տակ առւթանական դարկեր թմբուկ<sup>92</sup>)



Վարդն ասաց. «յես Հովսեփն եմ Յեզիստի չըքնադ.  
 Մի թանկագին հակինթ եմ, վոսկով լի յերախ»:  
 Սասցի.— «Թե Հովսեփն ես, ցո՛ւյց տուր մի նըշան»:  
 Ասաց.— «չասկի՛ս մըտիկ տուր արյունաթաթախ»...:



Գանի վոր այս աշխարհում շահ չըկա խելքից,  
 Վոչ վոք վայելք չի տանում բացի անխելքից,  
 Առա՛ջ քաշիր այն բանից, վոր խելք ե տանում,  
 Գուցե աշխարհն ազատի մեղ անել յեւքից...:



Հենց վոր շողա սուսլոտյան լույսը ծիրանի,  
 Պետք ե ձեռիդ դավաթ լինի՝ մեջը լի դինի:  
 Ճշմարտությունն, ասում են, թե մի դաուր քան ե...  
 Ասել ե՞ թե այն հենց ինքը դինին կըլինի...:



Ով գլխովսքից սարսափում, դրախտի մասին է  
 հողում,  
 Տե՛ս խըցերում, մըղկիթում, վանքում ու  
 սինազոգում,  
 Իսկ նա, ով աստվածային դադոնիքներից լուր ունի,  
 Ամենեկին այդ սերմից նա չի ցանել իր հողում:



✕

Այս աշխարհում լավ է վոր քի՛չ բարեկամ ունենաս,  
 Ժամանակիս մարդկանցից լավ է հեռու՛ միշտ կենաս.  
 Նա, վոր վոտից մինչև գլուխ քեզ քո նեցուկն է  
 Թըվում,  
 Մեծ թշնամիդ կըտեսնես, խեղբիդ աչքը թե բանաս:



Բախտի՛ անիվ, իմ սիրտը միշտ վըշտահար ես  
 անում,  
 Իմ բերկրանքի շատիկը պատառ-պատառ ես անում,  
 Հովը, վոր ինձ է փրչում, փոխարկում ես կըրակի.  
 Խըմած ջուրն իմ բերանում դու հող ու քար ես անում:



Աշխարհիս մեջ յերկու հասց ու մի խորջ նախընտրեցի,  
 Իշխանության և ինչքի տենչը մի կողմ նետեցի,  
 Ամբողջ սըրտով ու հողով առա դարվիշությունը,  
 Գարվիշության մեջը հենց հարստություն դիտեցի:



Յեթե վոր ձեռքըդ ընկնի յերկու լիտրաչափ դինի,  
 Անո՛ւշ արա թե քեֆում, թե մեջը բաղմականի.  
 Նա, վոր աշխարհն ըստեղծեց, հիմա հանդիստ է  
 քաշում,  
 Վոչ քո բեկի, վոչ ել վիճ մորուքի հետ դործ չունի...:



Թե վոր դարձան որերին մի կուռք-հուրի մի անդամ  
 Մարդի յեզրին մի դավաթ դինի տա ինձ քաղցրահամ,  
 Ինչքան ել վոր շատերին տըղեղ թըվա, բայց կասեմ.  
 «Շընից անգամ վատ լինեմ, թե դըրախտի անուռ  
 տամ»:





Մի՛ թըրպատուի՛ր, դա՛նց արա սատվածային  
 որենըներ, Բայց ունեցած պատառըդ տուր ուրիշին, ասա՛ կե՛ր-  
 Մի՛ զըրպարաի՛ր, վոչ՛ վոքի սիրտը զուր մի՛ Մի՛ վախի՛ր, մեր ժուժկալուժյան քողն այնպես ե  
 վըշտացնի՛ր, — վատրուված, Կոր ինչ անես, բան չի դուրս դա, ել չե՛ս կարող  
 Այն աշխարհում պատասխան տալը թող ի՛նձ, կաթկատել...  
 գինի՛ բեր:



Մակերեսային սերը ամենեկին դույն չունի,  
 Կըրակի պես կխամեո՛ւ տապ ու ջերմություն չունի.  
 Սերն այն ե, վոր նըրանից դարնըվածն ոք ու գիշեր  
 Ուտել-խըմել չըգիտե, դադար, տուն ու քուն չունի...



Բընակավայր դարձած մեղ՛ այս նենդ աշխարհում,  
 Ուզում եմ մի հանելուկ լուծել, չեմ կարում. —  
 Ասել եմ. — քո գեմքից լույս լուսին ել չըկա՛,  
 Ասում եմ. — քո հասակի նոճի չեմ ճարում:

Գինեաընում յեթե գինով չե լըվացումն, — ընդհատել...  
 Կտարած անունն ինչով լըվաս, փայլով անդոր ես պատել...  
 Մի՛ վախի՛ր, մեր ժուժկալուժյան քողն այնպես ե վատրուված,  
 Կոր ինչ անես, բան չի դուրս դա, ել չե՛ս կարող կաթկատել...



Քան հըռչակվես յերկրում վորպես ժողովըրդի թըշնամի,  
 Կամ խռովակեղ տանըդ նըստես, սիրտըդ կասկածը քամի,  
 Լավ չե՞ միթե, նույնիսկ յեթե Խեղր ել լինես կամ Յեղյաս 69),  
 Անհայտ մընաս, վոչ թըշնամու կարոտ, վոչ բարեկամի...



Վորքան կարող ես, աշխատիր, վոր վիշտ չբասս  
 վոչ մեկին,  
 Չըբազմեցնես և վոչ մեկին քո բարկության կըրակին.  
 Թե փափագում ես ունենալ հանդիսոտ մ'ըշտորնջենական,  
 Մի՛ վըշտացնի և վոչ մեկին, այլ կարեկցի՛ր  
 ամենքին:



Ունեցվածքի այնքան հոգն ու կյանքի տենչանքն  
 ի՞նչ է վոր.  
 Յերբեք մեկին տեսե՞լ ես, վոր կյանք ունենա  
 դարավոր.  
 Անցավոր է այս մի-յերկու շունչը վոր կա կյանքիդ  
 մեջ,  
 Անցավորի տուրքն ել չե՞ վոր սլիա՞ն լինի անցավոր:



յ

Ի՞նչ ժամանակ ես դբտել խոսելու, վեր կաց գինի՛  
 տուրք  
 Չե՞ վոր այս գիշեր քո գողարիկ բերանն է ինձ  
 կերակուր.  
 Գինի՛ տուր այտիդ նրման վարդադույն, չե՞ վոր  
 խըմեղք  
 Թողնելու ուխտըս խոսրոսնեբիդ պես վորոր է  
 գանդուր...

զ



Մեր խըմելու շնորհիվ է վոր գինետունը չեն և  
 մընում.—  
 Յերկու հազար անգամ թողել, նորից դարձել ենք  
 գինեխում...  
 Մե՞ղք... Լա՛վ, յեթե մեղք չըդործեմ, ել  
 թողությո՞ւնն ինչացու յե.  
 Չե՞ վոր ներման արժանիքն ել մեղանչելո՛ւմն է  
 կայանում...



Ուշադրութեամբ՝ խտովահոյզ եւ կյանքը դառն,  
Անխույթ մի՛ կաց, սուր սուր ունի այս աշխարհըն-  
Անուշ անգամ դունի ջիւճիւղ թե դարը,  
Կա՛ց, կուլ չըտա՛ս—սպասառ եւ դա թունախառն:



Տոնը յեկա՛յ, կըլըշտանա մեր փորը,  
Սաղին կածի՛ կարմիր գինին սափորը,  
Այս առանակ մարդկանց դըլխից կը հանի  
Սանձ-նամազն ու դընչակալ-ծոմն այս ոբը <sup>64)</sup>...



Այս բաժակի իրա՛նը տես կյանքով հըղի,  
Հովտի շուշան ե՛ արդավան ծաղկով հըղի <sup>65)</sup>.  
Վո՛չ, վո՛չ, սըխալ եմ, դա գինի՛ն ե նըրբագուչն,  
Վոր հեղուկ ե ե մի հեղուկ կրակով հըղի...



Վայրկենական տենչի շնորհիվ  
Տանջում ես միշտ հողիդ աղնիվ.  
Գիտա՞կ չես, վոր վիշտն ե սովոր  
Քո մեջ ծընում կարո՛տ, կըլի՛վ...



Թե սարծենաս տընով, սարքով,  
Արդյունքը փուշ հեքյաթ կյանքով,  
Նույնն ե թե մոմ վառես քամում,  
Ապրես՝ ուր կա հեղեղի ծով...



Ո՛ւր գինի՛, յե՛րգ, սափո՛րն անսպակ,  
Ո՛ւր բերկրա՛նք,—սափորի հիշատա՛կ...  
Վ Աշխարհում յերեք բան սիրեցի—  
Սեր, գինի, սափորի աղաղակ...



Ասում են ինձ, թե խըմող եմ,— յե՛մ,  
Վ Անառակ ու հարբեցող եմ,— յե՛մ.  
Վ Արտաքինիս մըտիկ մի տալ շատ,  
Ներքուստ ինչպես անփոփոխ եմ,— յե՛մ:



Այն գինին՝ ինչ նեկտար՝ ձեռքո՛ւմըս դիր,  
Այն դավաթն՝ ինչ նըկար՝ ձեռքո՛ւմըս դիր,  
Վ Գինին, վոր՝ ինչ շըղթա՛ դալարվում ե,  
Պենթացա՛, շո՛ւտ վեր առ, ձեռքո՛ւմըս դիր...<sup>66)</sup>



Մի ձեռիս զորան, մի ձեռիս բաժակ,  
Մերթ պղծին եմ մոտ, մերթ մարդ եմ հըստակ,  
Վոչ զուտ անհավատ, վոչ լըրիվ մոսլեմ՝  
Յերկընքի վիրուզ այս դըմբեթի տակ<sup>66</sup> :



Ի տեղեկություն քեզ ղեկուցանեմ .—  
Յերկու համառոտ բառով այդ կանեմ,—  
Ուղում եմ սիրուդ հետ պառկեմ հողում,  
Քո սիրուց հողից գըլուխըս հանեմ . . .



Սիրուհիս, վորից սիրաբազ վողբ դարձավ,  
Ինքն ել մի այլ տեղ նոր ցավ ըստացավ . . .  
Ինչպե՞ս ճար գըտնեմ ցավիս, քանի նա,  
Վոր իմ բըժիշկն ե, ինքն հիվանդացավ . . .



Սիրաբազ ղեկիտուից հենց քո բույրն առավ,  
Ինձ թողեց ու քեզ վորոնող դառավ . . .  
Հիմա, ո՛վ դարմանք, միտն ել չեմ դալիս,—  
Քո հոտն առնելով՝ քեզ նըման սառավ . . .



Ինչ սիրտ, վորի մեջ վոր կա լույս ու սեր,  
Կրոսպա՛լտ ե, թե իսլա՛մ անձնըվեր,  
✓ Թե սիրտ դըրճում անունն ե դըրված,  
Ազատ ե դրախտից, դժոխքից անվեհեր :



Հողիս, վո՞ր կողմից դու յերևացիր,  
Վոր լուսինը քս տեսքով մարեցիր . . .  
✓ Տոնին սիրուններ դեմք են դարդարում,  
Քո դեմքով տո՛նը դու զարդարեցիր . . .



Ինչե՛ր ասացին յերկընքի մասին,  
Տըգետ՝ խելքով ի՛նչ խելոք խոսեցին . . .  
✓ Հենց վոր յերկընքի խորհուրդն իմացան,  
Նախ ծանակ արին, ապա քընեցին . . .



Վոչ վոք որհասի քողից դեն չանցավ,  
Խորհուրդն աստըծու վոչ վոք չիմացավ,  
Թե առեղծվածից մեկն ել լուր տըլավ,  
✓ Վոչ բան հասկացվեց, վոչ պակսեց մեր ցավ . . .





Մինչև յե՞րբ մընամ կույր, անդիտակից .  
 Չըզվեւ եմ արդեն կըռապաշտ կյանքից . . .  
 Սայյամ, ասացին, թե կա մի դըժոխք, —  
 Ո՞վ գընաց դըժոխք, ո՞վ յեկավ դըրախտից . . .



Բանըս չըրտիեց մի ուր բախտը ծուռ,  
 Չըհընչեց դեպ ինձ նըվադ քաղցրալուր,  
 Բերկրանքով մի պահ դեռ շունչ չըքաշած՝  
 Բացեց ինձ իսկույն հարյուր ցավի դուռ . . .



Յտվին սովորի՛ր և ապրիր անվա՛խ,  
 Փառքով մի՛ դերվիր և յեղիր անկա՛խ,  
 Մի՛ նայիր քեզնից բարձրին, — մի՛ տանջվիր,  
 Այլ նայիր ցածրին, վոր ապրես ուրախ:



Վորքան ել կյանքում վոր թըշվառ լինես,  
 Բախտի բըռնության դեմ արկար լինես,  
 Մի՛ թող շըրթունքիդ տըմարդի ձեռից  
 Չուր կաթի, անգամ կրակում վատ լինես . . .



Թըշամին, վոր միշտ կըրքով ե տեսնում,  
 Ուղիղ ե վոր վո՛չ խելքով ե տեսնում,  
 չայելու մեջ իր ներքինն ե դիտում,  
 Մեռած պատկերն իր տեսքով ե տեսնում . . .



Նչին խելք տալու հույս մի՛ դավանիր .  
 Լավ ընկեր թե կա, վատերին վանի՛ր .  
 Վողջ աշխարհը քեզ կուղես հավանի,  
 Ուրա՛խ կաց, ինքըդ քեզ մի՛ հավանիր:



Լեզիդ ապադայից մի՛ դարձընիր ջուր,  
 Ամեն թանի համար մի՛ դառնացիր դուր,  
 Աշխարհի վայելքից քո մասն ըստացիր,  
 Քանի չի քաշել մահն իր մանդաղը սուր:



Փակել եմ ինձ համար ըղձի դուռն անդամ,  
 Փախել եմ մարդկանցից լավ թե չարակամ,  
 Մերթ մըզկիթի սուֆի ու մերթ վանական . . .  
 Բայց գիտեմ յես . . . ու նա — ինչ վոր յե՛մ, ա՛յն  
 կա՛մ . . .



Ուղղում ես՝ աշխարհի հաճելին դստուստ,  
Հավանիր տարորեն, դուհի՛կն անպակաս,  
ՎՈւղղափառ, քրիստոնյա և հրեա յեղիբ,  
Ամենքի լա՛վն աստ,— հրուհակ կըստանաս:



Ինչ հաճույք ու հանդիստ կար յերկրիս վըրան,  
Մենակի համար եր և տըրվեց իրան.  
Բայց, ալա՛ղ, ինչ մենակ վոր դարձավ յերկու,  
Իր հանդիստը նետեց դեպ քամու բերան... 67)



Ինձանից բարեներ տարեք Մահմեդին  
Յեկ ապա ասացեք՝ խոնարհած դետին.  
ՎՈ՛վ սեյեդ հաչեմյան<sup>68</sup>), ինչո՞ւ քո կրոնով  
Մաքուր ե թըթու թանն ու վո՛չ զուտ գինին»...



Խայյամին բարեք, ասեք՝ ասացի.  
ՎՈ՛վ Խայյա՛մ միամիտ, ըստ իմ ասածի՛  
Գինին անմաքուր ե, բայց իմ ասածը  
Տըհասի համար ե, վոչ թե հասածի»...



Վարդի ժամ ե, և՞ չհաճույքից ինձ զըրկեմ,  
Հիմա՞ յեվըս ծուռ քայլ չանեմ կրոնի դեմ,—  
Կարճրաթըշիկ ջահելների հետ մի պուհ  
Այժմ և՞ չդալարն այս՝ ալ գինով չըներկեմ...



Այսոր, այս իմ ջիվանության օրերին,  
Գինի խըմեմ, քանի վոր նա քեֆն ե իմ.  
Վ՛հա՛ռն ե, քա՞ղցր ե» չըհարցընեք, պարզ ե վոր  
Դառն ե, քանի վոր իմ կյանքն ե այդ գինին:



Ինչ որ ձեռքս գինու թասին եմ փարում,  
Ծայր բերկրանքից հարրում, ընկնում եմ, մարում,  
Այս հուր վողուց ու հոսանուտ բառերից  
Ամեն զըլխում հարյուր հըրաչք եմ շարում...



Միքուրս գինու գերի՛ն լինեք շարունակ...  
ՎՈւշքըս սըընգին, վինի՛ն լինեք շարունակ...  
Բըրուտը իմ հողից յեթե չինեք կուժ,  
Կաժն ամվողը գինի՛ն լինեք շարունակ...





Ճըրադը վառ, լուսին սլայծառ ու գինի.  
Սաղի՛, շըշե՛րն անիւր գինին ծիրանի,  
Հանի՛ր հողից այս սիրտըս վառ, թա՛ց արա,  
Մի՛ թող մոխիր դառնա, քամին տա՛ տանի...



Ալ ու հըստակ գինուց է վողջ գանձը մեր,  
Թասն անձանձիր շարժում է նախանձը մեր,  
Գինին գինու վրա յենք կոնծում, մեր գըլխում  
Գինին դառնում, գինու գըլխին—անձը մեր...



Թասը տուր ի՛նձ ջինջ սուտակի, է՛յ սաղի,  
Տաղը խըլի՛ր իմ կըրակի, է՛յ սաղի.  
Մինչ բըռնում է խելքըս սըրտիս ոճիքից,  
Ձե՛ռըս տուր վեչն այդ բաժակի, է՛յ սաղի:



Լույս է, լեւի՛ը, ո՛վ իմ նազանի յարը,  
Կաթ—կաթ գինի՛ խըմիր, գըզվիր կիթառը,—  
Վոչ մի եյակ չի մընալու կենդանի,  
Վոչ մի մեռած յետ չի գալու աշխարհը...



Անդամ լինես քարի մեջ հուր, է՛յ սաղի,  
Քեզ կը ծակի սրհասի ջուր է՛յ սաղի:  
Հող է աշխարհ, դադե՛լ<sup>60</sup>) յերգիր, յերգչուհի՛,  
Կյանքն է վաղանց, գինի՛ բեր տուր, է՛յ սաղի:



Յերբ կը մեռնեմ, ինձ կը դնեն հողի տակ,  
Հողիս ծոցում թող վոք լըսվի լոկ կատակ,  
Գըլխիս վերև գըրվող աշյուսի կալը  
Թող շաղախեն գինով՝ ջըրի փոխանակ:



Ժամանակին, յերբ նոր վարդի լուրը տան,  
Պատվիրիր՝ տան մե՛ծ թաս, վո՛չ սոխորական.  
Դժոխքից, դրախտից, հուրից ու հանցանքից  
Ազա՛տ նըստիր, վոք վոչ յեղել, վոչ ել կան:



Մարդիկ ինձ միչտ համարում են անառակ.  
Յես մեզ չունեմ. ի՞նչ է դըրանց նըստատակ.  
Որենքի դեմ իմ մեղն, ո՛վ կեղծալորենք,  
Ի՞նչ է յեղել, թե վոչ գինի ու կատակ...



Երջում եյի ծաղկով, դինով ու անցով.  
Բանըս յերկրի հորովից լավ չըդարձավ.  
Գինուց վոր իմ ցանկացածը չըստացա,  
Մընացածից յես վաղ անցա, ու անցով:



Ասում են, թե մոտ ե ծամը—անհաճոն,  
Յերբ կարգելի խըստիվ դինուն բերել ձոն...  
Յես ել Շարան ամսում այնքան կըխըմեմ,  
Վոր Ռամազանն արբած ընկնեմ մինչև տոն... 70)



Այս Ռամազան ամիսը հենց վոր յեկավ,  
Խեղբին չըլթա դընող բըռնավոր յեկավ.  
Տե՛ր բարերար, մարդկանց միամիտ ստեղծիր,  
Վոր կարծեն թե Շավվալն եր, վոր նոր յեկավ... 70)



Մահվան ժամին, յերբ պայքարով կը դբաղվեմ,  
Վորպես տերև կյանքի ճյուղից կը քաղվեմ.  
Դե՛հ, աշխարհը խարբալեմ իմ ցնծությամբ 71),  
Նախ քան ինքըս մոշի—մոշի կը մաղվեմ:



Սաղի՛, սիրտըս կարոտից ե վըշտաբեկ,  
Վըշտահարի բըժխչին ես դու, դարձիր յե՛կ,  
Վտաքիդ աակը շունչըս վըջելն իմ հույսն ե,  
Ձի մարելու՝ քանի կամ՝ հույսն իմ յերբեք:



Գաղտնի՛ պահիր դաղտնիդ ամեն ցած մարդից,  
Գաղտնի՛ պահիր դաղտնիդ հիմար—տըմարդից,  
Մարդկանց հողու հետ մի տես ի՛նչ ես անում,  
Փըրկի՛ր մարդկանց այդ աչքերիդ թակարդից...



Խոստովներիդ յեց վոր ձեռըս պարզեցի,  
Պարկեշտուլթյան դեմ մեղանչել չուղեցի,—  
Խոստովներիդ մեջ յես տեսա սիրտըս խենթ,  
Մըրտի՛ս հետ եր, վոր ձեռնախաղ սարքեցի: 80)



Սիրուհիս (կյանքն յերկա՛ր լինի ցավիս պես)  
Սյտոր բացեց ինձ նոր շնորհի ասպարեղ,—  
Աչքը զըցեց աչքիս մի պահ ու դընաց—  
Իբըր՝ «նեաիր ջո՛ւրն, ինչ բարիք վոր անես»...





Անջատվելով, սազի՛, յեղա վըշտակեղ.  
Ուր վոր դընաս, ձեռքս փեշիդ, խելքըս քեղ.  
Գնացիր, հաղար սիրտ փըշըրվեց քո վըշտից,  
Հե՛տ յեկ, հարյուր հազա՛րն արա վողջակեղ:



Մարդիկ, վորոնք կյանքում հըլու ապրեցին,  
Մինչև կյանքի վերջը թըշվառ մընացին,  
Մահին անվերջ «թըշվա՛ռ, թըշվա՛ռ» ասելով՝  
Ըստըրկության ճանպով անցան-դընացին...



Յերկընքում ես, — կըբըլըրեն ըստորոտ,  
Ճոխ ես ապրում, — կըղարձընեն քեղ կարոտ,  
Շըրջահայա՛ց յեղիր, յեթե կարող ես,  
Վիշտ մի՛ փընտրիր, ճանարան շտո ե քարքարոտ...



Յերկնի՛ց անիվ, վոչ խելք ունես, վոչ հանձար,  
Ազատ մարդուն յերբեք չեղար դու սատար,  
Գանձ ու գոհար տըմարդների՛ն ես տալիս...  
Կեցցե՛ս, յերկի՛նք, կնակերպների՛ սիրահար...



Ինչ ժամանակ վիշտը սըրտիդ տիրանա,  
Կամ վիճակիդ հոգսը վըզիդ ծանրանա,  
Ուրիշների՛ սըրտի հալը հարցըրու,  
Վոր քո սըրտից ամեն մի ցալ վերանա:



Ախո՛ս լակոտ, արադավազ մի թաղի <sup>72</sup>),  
Վորից արադ քամին կարող չեր վաղի...  
Այնքան եր սիրտն ուղում վոսկոր, վոր վերջը  
Բաժին դարձավ ատամների՛ն վարաղի... <sup>73</sup>)



Նըրանք, վորոնք հին թաղիքով են ծածկված,  
Միշտ ձեռներին բրոնած հաշիշ, յերկու հաց,  
Ատում են՝ մենք Շերլի յենք ու Ջոնեյդ ենք»...  
Շերլի չե՛ն, բայց... Բերխի թաղում ճանաչված... <sup>74</sup>)



Մի-յերկու ցորեն հաց յեթե վոր ձեռ ընկնի,  
Վոչխարի մի յերան, յերկու լիտր ել գինի,  
Լուսնադեմ մեկի հետ թե նըստես պարտիզում,  
Հաճույք ե, վոր չըկա տանն ամեն սուլթանի...



Հաճելի՛ր յե, սաղի՛, վառ լուսինն ել պայծառ,  
Գինի՛, — խելք ե ստացել՝ տե՛ս՝ յերկինքը խելառ.  
Հո գիտես՝ որհասն ինչ կալ վառող կայծակ ե,  
Կը տեսնես մեկ ել մեր կալն արդեն հըրավառ...



Գոյության այս ծովը վոչընչից ե զեղել,  
Ճըշտությունն այս մասին դեռ վոչ վոք չի պեղել,  
Այս կյանքի ծաղումից շատ-շատերն են ճառել,  
Բայց ուղիղն այս մասին դեռ ասող չի յեղել:



Կարկատանով սըրանք վոր աչք են ծակում<sup>76</sup>,  
Քանի-մի քայլ հաղիվ արած տան բակում  
Յեվ անտեղի քիչ այրուբեն՝ դոց արած,  
Ինչքա՛ն բարի անուաներ են ծանախում...



Նորից նախկին մեր շրվայտ կյանքին ենք փարած,  
Մեղնից որվան հինգ նամաղն իսպառ վըտարած.  
Ուր վոր գինու թաս կա, մեղ այնտե՛ղ կըտեսնես՝  
Սախորի պես վիզներըս դեպ նա յերկարած...



Բախտը արվալ ինձ նոր ցալ՝ մինչ վերջը խըմեմ,  
Գինի լինի ցալի տեղ ու յես չըխըմե՛մ...  
Գինին արյունն աշխարհի, աշխարհն արնախում, —  
Արնախումի արյունը ինչպե՞ս չըխըմեմ...



Այն, ինչ վոր ինձ ասում ես, քենն ե դըրդում քեզ,  
Ասում ես, թե զինեմոլ, անկըրոն եմ յես,  
Յես ինքըս եմ հաստատում, վոր այդպես եմ,  
Խըրճո՛վ դատիր, կհասնի՞ր քեզ՝ այդ խոսքն ասես...  
բայց...



Զխլանության ժամն անցալ, մարմինըս յետքից,  
Հաճույքը դառն ե, դինին մընաց վողեկից,  
Սըլաքի պես հասակըս դարձալ կոր աղեղ,  
Նետըս դարձալ ցուպ. այս ի՛նչ կյանք ե  
«անկըսկիծ»...



Աշխարհն ամբողջ ծայրեծայր ըո՛նը համարիր,  
Հարյուր զանձարան դոհար-վոսկով դարդարի՛ր,  
Գանձի գըլխին ամեն որ դաշտի ձյունի պես  
Յերեք անգամ նի՛ստ ու վե՛ր, հետո՞... ի՞նչ  
արիք...





Վարսուգ խաղընկեր դարձրեց Խոթանի<sup>76</sup> մուշկին,  
Հոգին շնչակեց յեղալ շըրթիդ սուտակին.  
Նոճու հետ քո հասակը համեմատեցի,  
Նոճին գըլուխն այն որից ցըցեց դեպ յերկին...



Յեթերային արեգակը միշտ վառ սեր է,  
Յեղ յերջանիկ դաշտահալը կայտառ—սեր է.  
Սերն այն չէ, վոր վողբ արձակես բըլբուլի պես,  
Յեթե սիրուց առանց վողբի մեռար—սեր է...



Վարսերըդ այդ դեմքիդ փըլված մնա՞լ են  
ուզում...  
Արժե՝ կանգնես գլուխ, յերբ Հոռոմ լինի  
հուզում...  
Աչքըդ հոնքիդ խորան դարձրել ու նըստել է.  
Հարբած քաֆարն իմամ դառնա՞լ է յերազում...<sup>77</sup>



Վոտիդ համբույրն, ուրախության ո՛վ դու լապտեր,  
Լալ է, քան թե շատի շըրթին տաս համբույրներ.  
Ձեռքս հոգսիդ փեչն է բըռնում ամեն մի ուր,  
Վոտըս վազում, քեզ է փընտրում ամեն դիչեր:



Դո՛ւ, վոր շըրթիդ անմահական ջուր կա վըճիտ,  
Մի՛ թող թատի շուրթը պաղի շուրթը վարդիդ.  
Մարդ չըլինեմ, թե չըխըմեմ կըժի արյունն,—  
Ինչացո՞ւ յե նա, վոր դընի շուրթը շըրթիդ...



Թե չես խըմում, մի՛ ել ծաղրիր խըմողներին,  
Դադա՛ր սուր այդ քո սուտ ու փուտ խըրատներին,  
Գըլուխ տարար՝ հորդորելով, վոր չըխըմեմ,  
Բո բյուրավոր արարքի մոտ ի՞նչ է գինին...



Սաղի՛, բեր հին գինին, վոր իմ ընկերն է հին,  
Սրանց վորթի դըստեր քեֆերն ի՞նչ կը լինին...  
Գինի խըմողն, ասում են, թե կըբոն չունի.  
Յե՞ս անկըրոն... իմ կըբոնն է հենց ջինջ գինին...



Կըժի շըրթունքն իմ շըրթունքին, միտքը դիտե՞ս.  
Այսինքն՝ «իմ շըրթունքն ել եր հենց քոնի պես.  
Հենց վոր կյանքըդ վոչընչանա, իմիս նըման  
Պիտի բուրան շըրթունքները անի հըրկեդ»...



Նախ քան թե քեզ հարբեցընես մահվան բաժակ,  
 Վոչընչանաս մի դիպվածի ապտակի տակ,  
 Այսան՝դ ձեռք բեր կյանքի հյուսթը, քանի այնտեղ  
 Բան չես շահիլ, յեթե գընաս ձեռքդ դարտակ:



«Փիլիսոսիա» ինձ անվանեց իմ թշնամին.  
 Աստված գիտես, այդ խոսքը նույնն է, ինչ քամին.  
 Մինչդեռ նույնիսկ՝ ինչու յեկա այս ցավ աշխարհ  
 Կամ ով եմ յես—չբզիտեմ ել հենց այս ժամին:



Մի՛րտ, վոչ վոքից մի՛ սպասիր սեր սիրեկանի,  
 Մըրտիդ ցավին մի՛ պահանջիր ըսպեղանի,  
 Մենակ նըստիր, քո ցավն ինքրդ կըբիր մենակ,  
 Հենց բնկերրդ քեզ բնկերի կարոտ կունի:



Մարդուս— ասում են— մըտքի շող է հարկավոր.  
 Կամ ծագումով բարձրը ծընող է հարկավոր.  
 Այսոր այնպես է մեզ պատող շըրջապատը,  
 Վոր բուրբը վոչինչ, լուկ փո՛ղ է հարկավոր:



Կըշտացել եմ, ո՛վ աստված, իմ «գո»-յից վաղուց,  
 Մի՛րտըս խեղդված՝ ձեռքս դատարկ կյանք  
 վարելուց.  
 Թե «չգո»-յից «գո» յես շինում, դե՛հ, դո՛ւրս  
 բեր ինձ  
 «Գո»-յիդ սիրուն ինձ այս «գո»-յից— չըլինելուց...



Այս տըխմարներն այնքան են լուրջ ու տըրամերես,  
 Խիստ շղթազված, բայց մեջը փուչ ծընծղա կարծես.  
 Կուզես վոտըդ վոր համբուրեն, «պատվով» ապրիր,  
 Չե՞ վոր սըրանք «պատվի» գերի յեն մըշտապես...



Վորպես ձըմբան քամին՝ յեկա արադաշարժ,  
 Մարմինըս թույլ նախ քան դատնար կյանքին ջիչ  
 վարժ.  
 Հիմա տըկար՝ հիվանդ մարդու շընչի նըման՝  
 Գընում, դալիս եմ ծույլ, դանդաղ ու գետնաքարջ...



Քանի մարմնիդ մեջ կա վոսիոր, ջիդ ու կյանքի համ,  
 Վոտըդ մի՛ դիր դուրս սահմանից՝ գըծված մի անդամ,  
 Վիդ մի ծըռիր թըշնամու մոտ— լինի Ռոսթամ-Չալ,  
 Բան մի՛ խընդրիր բարեկամից—լինի Թեյ-Հաթամ<sup>(76)</sup>:





Այս ամբոխի կրակում ծրխից դատ այլ նյութ չըկա.  
 Չունենլորից ճոխութեան հույս՝ գեթ խախտում՝ չըկա.  
 Ձեռքովըս, վոր բախտի ձեռից գըլխիս եմ պահում,  
 Ինչի փեշից վոր բըրնում եմ, մի ոգուս չըկա...



Սաղի՛, վըշտիցըդ խուսափել՝ ավա՛ղ՝ չըգէտեմ,  
 Աստված՝ գիտե՛՛ չեմ գիմանում, վոր քեզ չգէտեմ,  
 Միտքըս դո՛ւ յես, բացի քեզնից սըրտումըս վո՛չ վո՞ք  
 Չըկա՛, չըկա՛, աստվա՛ծ վըկա, քո հուր գեմքի  
գեմ՝...՝



Քամու նըման նըրա հյուսիսն հասնելն ե գըծվար,  
 Նըրա ցալի համար ցալեր քաշելն ե գըծվար.  
 Ինձ ասացին, թե չըտեսնես նրա պատկերն աչքով.  
 Թե իմ աչքն ե, աչքով աչքը տեսնելն ե գըծվար:



Վարդի բույրի սիրուն՝ փըշից ցալ առնել արժե,  
 Գինու սիրուն՝ գինուց գըլուխ ցալելն ել արժե,  
 Մի յար, վորից հազար հոգի նոր կյանք են առնում,  
 Խոստովանլի՛ր, նըրա սիրուն ըստասել արժե...

Սմեն բանից ձեռք կը քաշեմ, միայն գինուց— վո՛չ.  
 Սմեն բանից յես խույս կըտամ, սակայն

գինուց—վո՛չ.

Յեթե այնպես լինի, վոր յես դառնամ մոռաման 79),  
 չըրաժարվե՞մ պիտի մոզի յես այն գինուց...Վո՛՛չ...՝



Գինին գիր ա՛փըս, թե չե այրվում ե սիրտըս տապից,  
 Յեվ այս իմ կյանքը սընդըկի նըման փախչում ափից.  
 Չարթի՛ր, քանի վոր քընած ե բախտի արթնութեանը,  
 Տե՛ս, վոր գըրկվելու յե ջիւանութեան հուրը  
Թափից...՝



Վորքան յերկընքում Ասաղիկն ե ծագում ու լուսինը,  
 Գինուց ավելի հաճելի բան չի տեսել մինը...  
 Չարմացած եմ, թե գինեվաճառներն ի՛նչ են անում,  
 Գինուց լավ ինչլի՞ պիտի տան ծախած գինու գինը...՝



Կուլայի բերնում գինու քըլքըլոցն ի՛նչ անուշ ե,  
 Յեվ թառի վողբը, սըրնդի կըլկըլոցն ի՛նչ անուշ ե,  
 Սըրտադրավ կուռքի հետ, զուլալ գինու գըլխիին  
նըստած,  
 չե՛յ, հե՛յ, մոռացած կյանքի վըլվըլոցն՝ ի՛նչ  
անո՛ւշ ե...՝



Դու ամոթ չունեն՝ս, ինչքան մեծութուն բանացընես,  
 Մարդկանց չարչարանք, նեղութիւն տալով  
 լացացընես.  
 Ասենք՝ վողջ աշխարհ դարձալ ծայրեծայր քո  
 կալվածքը,  
 Բացի այն, վոր այն մի որ կըթողնես, ել ի՞նչ կանես,



Ո՛վ յերկինք, ինձ հետ միշտ ել յեղել ես դու կիտերես,  
 Դարմանն ուրիշին, ցալի՛ն ինձ ես տըվել դու  
 մըշտապես.  
 Ել ի՞նչ գենք մընաց, չըբանեցընեմ վոր յես քո դեմ,  
 Ի՞նչ կըռիւմ մընաց աշխարհումըս, վոր ինձ հետ  
 չանես...



Աշխարհի խորհուրդն ինչպէս գըրված է մեր  
 տետրակում՞  
 Ասել չենք կարող,—իբ մեջ վըտանդ է պարունակում.  
 Քանի վոր այսքան մարդկանց մեջ չըկա մի  
 հասկացող,  
 Չենք կարող ասել այն բոլորն, ինչ վոր կա մեր  
 հոգում...



Հե՛յ, յերկնայի՛ն ճախարակ, վոչ հաց դիտես,  
 վոչ ել աղ,  
 Մերկացընում ես դու մեղ վորպէս ձուկը մերի՛ ու  
 պաղ.  
 Ճախարակից կընով գեթ կըհաղնըվեն յերկու մարդ,  
 Յերկի՛նք, ա՛յն լալ է քեզնից, իսկ դու ծանակ ես ու  
 խաղ...



Գընացի՛նք, ու մեղ վըրա այս աշխարհն ապշած  
 մընաց,  
 Քանի վոր բյուր գոհարից լոկ մեկը ծակված  
 մընաց 80).  
 Հազա՛ր ասիսոս, վոր մարդկանց տըղեա խեղբից  
 անդիտակ  
 Հարյուր հազար խոր իմաստ այնպէս ել չասված  
 մընաց...



Ուրիշի վատն ուղողը կամքին բընավ չի հասնի,  
 Մեկ վատ չանի՛ տեղն իրան հարյուր նոր ցալ չի  
 հասնի.  
 Յես քո լալն եմ ցանկանում, իսկ դու իմ վատն ես  
 ուղում,  
 Քո վատն ինձ չի վընասի, ինձնից քեզ լալ չի հասնի:





Բախտ, ի՞նչ եմ արեւ, ասա՛, ինչի՞ց ե սըրտիդ  
մուռը,  
Քափ-քըրտընքում կորցնում ես՝ մինչև վո՛ւ տաս իմ  
կուրը,  
Հաց չես տալիս՝ մինչև վոր ինձ չես տանում թաղից  
թաղ:  
Ձուր չես տալիս՝ մինչև չես տանում երեսիս  
չուրը...  
☉



Ահա «պատիւ» վայելող հարուստների մի ժողով:  
Իրանցից իսկ զըզված են իրանց հողսով ու դողով:  
Յեւ ով վոր ել իրանց պես աղահուլթյան դերի չե,  
Զարմա՛նք, մարդ չեն համարում, և նայում են  
ծիծաղով...  
☉



Թաղուհի՛, քանի վոր քո նյութած վըշտից եմ հարբել  
Յեւ ձիուց իջել եմ, քո ցավից հետևակ դարձել,  
Քանի վոր հոգնել եմ վըղի և շահի այս խաղից,  
Ուստի այտըս այտիդ (բերդ բերդիդ) մաթ եմ  
մընացել...  
☉



Ե՛յ, վորիդ այտերը կերտված են մասուրի նըման,  
Յերեսը ձուլված ե չինական կուռքերի նըման,  
Ե՛յ, քո մի հայացքը տըվալ ինձ շահ՝ մաթ մընացած,  
Բերդի, վըղի, ձիու, թաղուհու, զինվորի նըման: 81)



Ե՛յ, աշխարհից ընտըրված վողի յես դու ինձ համար,  
Սըրտից, աչքից անուշ ես, հողի յես դու ինձ համար:  
Հողուց, սանամ, ավելի աղիդ վոչ մի ինն չըկա,  
Հարյուր անգամ ավելի հարդի յես դու ինձ  
համար... 82)



Սիրտը զըվարթ չի լինի, վոր ցավով ե վըշտանում:  
Դու հեռացար, — իմ զըվարթ սըրտին վիշտն ե  
ծանրանում:  
Քեզնով եյի քողցր անում դառնությունը աշխարհի,  
Վոր հեռացար, դառնացա, աշխա՞րհն ել ինչ ես  
անում...  
☉



Գինին դիր իմ ձեռքի մե՛ջ, զուր տեղը մի՛ գըրգըլա,  
Ու դիլ ձայնով ըսկըսիր բըրբուլի պես կըրկըլա:  
Յեթե սաղեր, վոր գինին առանց յերդի խըմեյին,  
Շըչի բերնից զուրս գալիս հենց ինքը չեր գըրգըլա:



Ասում են, թե՛ մի՛ խրմիր Շարան ամսում, չի  
սաղում,  
Մեկ էլ Ռաջար՝ ասարժուն հատուկ ամսում են  
ստում.  
«Սուրբ» են Ռաջար ու Շարան ամիսներն  
աստվածային,  
Մենք խրմենք Ռամազան մեզ հատուկ ծոմի  
ամսում...<sup>53</sup>



Մեկնեին չեմ խրմում քեֆում ջրի ոչարակ,  
Մինչև գինի չեմ խրմում հողսի ձեռից դեօ՛ւնդակ.  
Հացըս մեկի աղի մեջ չեմ թաթախում, մինչև վոր  
Յես չեմ ուտում խորոված իմ թոքերից ջերմ,  
պապակ...



Այսոր, անունն է վորի տենչանքների ուրբաթ սր,  
Գինին խրմիր փարչերով, ի՞նչ դավաթի տեղն է  
վոր,  
Մենք որ թե որական մի փարչ գինի յես խրմե՛լ,  
Այսոր քանի սուրբ որ է, խրմիր յերկո՛ւսը այսոր:



Կյանքի եջը վորպեսզի վըշտերի հետ բանտարկեմ,  
Պիտի ժըպտուն այս գինին թասի սըրտում  
դատարկեմ.  
Վե՛ր կաց ու այս բաժակը լըցրու գինով լիու՛լի,  
Գուցե յերկրիս վըշտն իսպառ աշխարհից դուրս  
ուղարկեմ:



Խոսքն անվերջի, ճըղնավոր, մինչ յե՞րբ կըրկնես  
անընդհատ.  
Անցավ չափն իմ գիտության, վոր դու սըվեր  
լիռասա...  
Գինի՛ խրմիր, քանի վոր գինի չըկա խելքիդ մեջ,—  
Ինչի խելքըդ չի հասնում, գինին կասի քեզ  
հաստատ...



Մաղի՛, բաժակ, քանի վոր սըրտիս ճըադը չի  
վառվել,  
Բանի՛ գինու կըրակից այս կյանքը դեռ չի մարվել,  
Ա՛հ, այն սուտակ, այն հըստակ գինո՛ւցը տուր, վորին  
վոր  
Ով իր չըրթունքն է գըրել, չըրթունքը յետ չի  
տարվել...





Ամեն որ միտք եմ անում՝  
գիշեր դալուց ձեռ քաշեմ՝,  
Բերնե-բերան լեկի-լեցուն  
Թասի գինուց ձեռ քաշեմ .  
Հասալ վարդի ժամն ահա,  
վարդի ժամի՞ն ձեռ

քաշեմ . . .

Ո վո՛չ, վո՛չ, վո՛չ, լայլ ե վոր  
ձեռ քաշեմ . . .



Մենք ու գինին, սլարն ու տաղը  
այս անկյունում  
այլերակ,  
Հողի ու սիրտ, հավատ ու խելք  
վողջը գինու գրավի  
տակ,  
Գըլուխներըս գինու գըլխին  
սլրտույտ դալիս, գինին  
մե՛ր,  
Լուսամփոփ ե դարձած հատակն,  
խակ առաստաղն ել  
հատակ . . .



Քանի իմ մեջ չունչ կա,  
գինի պիտի խրմեմ  
անդադար,  
Թեկուզ անգամ չահն աշխարհի  
վընաս դառնա ինձ  
համար .  
Ե՛յ, աշխարհի՛ հողի, յե՛կ,  
այս աշխարհն ուրախ  
վայելենք,  
Յես վո՞րտեղից գիտեմ՝  
արդյոք կա՞, թե՞ չըկա  
այլ աշխարհ :



Հիվանդ եմ յես, յես ջերմ  
ունեմ, գողգողում են մորթ  
ու միս,  
Ծարավը միտք ունի  
հողիս հանի, սպանի  
վողբալիս .  
Չարմանալին այն ե սակայն,  
վոր յես հիվանդ  
ժամանակ  
Ինչ ել խրմեմ բացի  
գինուց, միայն վընա՛ս  
ե  
տալիս . . .



Այն որը, յերբ վոր  
ասողերը հանդչեն  
խավարի  
ծոցում,  
Այն վայրկենին,  
յերբ տիեզերքն  
ընկնի մի  
խրարանցում,  
Փեշղ կըբռնեմ,  
կասեմ, «սիրելի՛  
«անսըխալական»,  
Թե ստեղծել ես դ՞ու,  
մեռցնելով ինչո՞ւ  
սըխալ ես  
գործում» . . .



Շատերը յեղան,  
վորոնց արյունը  
յերկինքը թափեց,  
Հողից շատ ծաղիկ  
բուսալ, ու կըրկին  
վողջ հողը  
լայկեց .  
Զիվանությամբ  
ու գեղով, է՛մ հողյակ,  
զուր մի՛  
սլարձենալ,  
Վորքա՛ն չըբացված  
կոկոն բացվելու  
զուր հույսը  
խարեց . . .



Գինի յեմ խըմում, հակառակորդներ «մի՛ խըմիք  
 դինի»  
 Ասում են աջից, ձախից, — «թըշնամին է նա մեր  
 դինի»:  
 Հա՞... վոր աշղպես է, ե՛լ շատ կըխըմեմ, չե՞ վոր  
 կըրոնի  
 Թըշնամու արյուն խըմելն ասործուն հանո կըլինի...



Գինետան շըվայտ շըրջանի գըլուխ յեղողը յե՛ս եմ,  
 Ըմբոստությունից հընաղանդություն ընկնողը յե՛ս  
 եմ.  
 Յերկար գիչերին նա, վոր զուտ գինին և իր վերալոր  
 Սըրտի արյունը աղոթք է դարձնում, դարձնողը  
 յե՛ս եմ...



Յերկընքի թասը զուրկ է անուշից ըստ ամենայնի,  
 Զգիտեմ, ել այս աշխարհում ո՞վ է, վոր հանդիստ  
 ունի,  
 Ել մահվան մըտքից յերջանիկ մի շունչ չես կարող  
 քաշել,  
 Ուրեմըն անշահ աշխարհիս շահն ել ի՞նչ սլիտի  
 լինի...



Ասի՛ «հյուսիշ գըլուխն ինչքան գըլուխ է կերել  
 սիրահարը»,  
 Ասաց՝ «գըլուխ է թե կերել, դու քո սի՛րտը վըրան  
 դիր վառ...»  
 Ասի՛ «մի՛ որ քո հասակը ամբողջովին յեա չեմ  
 տեսել»<sup>84</sup>),  
 Ասաց՝ «նոնու հասակըն ո՞վ, ո՞վ է տեսել վերից մինչ  
 վար»...

1927 թ. ոգոստ.—1928 թ. ապրիլ,  
 Յերևան:



*[Faint, illegible handwritten text]*

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն՝ նախ քան թե կմեռնենք, փոշի կդառնանք և մեր փոշուց կուժ կշինեն:\*)

2 Լալա — կակաշ, վորը պարտիկ բանաստեղծության մեջ նույն հարգն ունի, ինչ վոր յեվրոպականի մեջ վարդը:

Շահրիար — արքա:

Խալ — ծին:

3 Ակնարկում և գեղեցկուհուն, վորն արբեցնում և սիրով, ինչպես գինու դավաթը գինով:

4 Մահմեդականին թաղելուց առաջ գաղտնի պատվեր են տարիս հանդերձալում արքայություն գնալու միջոցների մասին:

5 Պարսկաստանում դարին համարվում և ամենամարտեք բանը: «Յերկու գարիով վաճառել» վոճը նշանակում և ձրի տալ:

6 Սաղի — մատովակ: Այս բառով պարսիկ բանաստեղծները սովորաբար դիմում են սիրածին:

7 Պարսիկների մեջ տարածված և այն պատկերացումը, թե յերկերը կանգնած և յեղան վրա:

8 Այս քառյակը դրսևում և նաև Հաֆեզի «գլխանում»:

9 Վոսիկե թաս, վոսիկե դավաթ — յերկինք, տիեզերք:

10 Բնագիրը հավանորեն աղավաղված և:

11 Խոյսամի ժամանակ վիճարանության առարկա յեր, թե կենդանին քանի տարրից և բաղկացած — չո՞րս, թե՞ հինգ: Չորս տարրերն էյին համարվում՝ հողը, ջուրը, կրակը և ուրը, վորպես Հունաստանում Գրիստոսից հինգ դար առաջ համարում էր փիլիսոփա Եմպեդոկլեսը:

Մոթրեր — պարոզ:

\*) Վորոչ մեկնություններ տվել և ինձ արեւելագետ Միրզա-Հոսեյն Հասան-ղաղեն (Սաֆիա, Յերեւանում), վորին հայտնում եմ խորին շնորհակալությունս:



11 Ուղում է ասել, թե ինչպես չի կարելի ջրով լի ամանը թեք պահել այնպես, վոր ջուրը չթափվի, այնպես էլ չի կարելի աչք ունենալ և չնայել դեղեցկութանը, մինչդեռ կրոնն արդելում է կանանց վրա աչք ունենալ:

13 Ձամշիբ՝ կամ կրճատ՝ Ձամ և Քեյ-Սոսրով կամ կրճատ՝ Սոսրով պարսիկ առասպելական շրջանի արքաներ են:

14 Սոլթան Մահմուդը պարսկական Ղազնավի հարստութան թաղավոր էր, հայանի իր հարստութամբ: Թաղավորում էր Սոլթամից մեկ դար առաջ, Ֆերդուսիի ժամանակ:

Դավուդ — հրեյական Դավիթ արքան:

15 Այլ վարիանտով վերջին յերկու տոգն այսպես է.  
«Անհրաման, չե, ինչ մեղք վոր մենք դործում ենք, էլ ապանու հոգն ի՞նչ անենք միալար»:

16 Սուֆիական վարդապետութուն է, վորը հեղինում է Սոլթամը:

17 Այս քառյակը դտնվում է նույնպես և՛ Հաֆեզի, և՛ Ջալալ-եղ-դին Ռումիի ժողովածուներում:

18 Մահմուդի մասին տե՛ս 14-րդ ձանոթությունը:

Այսպիսի Մահմուդի սիրելի ծառան էր:

19 Թուս, Ֆերդուսիի բնակավայրը, այդ ժամանակ Պարսկաստանի մայրաքաղաքն էր:

Քեյ-Քավուս կամ Քավուս պարսկական Քեյան տոհմի նշանավոր արքա յեր:

20 Անջլադե — յերկրպագութուն. այսպես է կոչվում նաև այն փոքրիկ դորդը կամ կարպետը, վորի վրա մահմեդականը յերկրպագութուն է անում:

21 Բժիշկ — Սոլթամի տիտղոսն էր:

22 Առաջին «բաժակը» նշանակում է գինու բաժակ, յերկ-րորդը՝ կյանքի բաժակ:

23 Այս և հետևյալ յերկու քառյակները համարյա բառացի կրկնութուն են:

24 Կակաչ:

25 «Ղազերի» (զորության) դիշեր է կոչվում այն դիշերը, յերբ դորանը — մահմեդականների սրբազան դիշերը — յերկըն-քից յերկիր իջավ...

26 Ռենդ — շվայտ, հարբեցող: Սոլթամն այս բառը դործ

է անում «բարձր հատկութունների տեր» մտքով՝ իրանց կարգին համարողներին հեղինու համար:

Յերկու կյանք — թե՛ ներկա, թե՛ հանդերձյալ:

27 Մահմեդական աշխարհում փեսան հարսնացվին վորոշ դումար է բնծարում, վորը կոչվում է «բարին» — նվեր, ձոն: Սոլթամը նմանեցնելով իրան փեսայի, աշխարհը հարսի, ուղում է ասել, թե աշխարհին նվերելու վոչինչ չունի և կարիք էլ չկա, բացի ուրախ սրտից:

28 Ձամդամի աղբյուրը (Նրհորը) Մեքքայի (մահմեդական սրբազան քաղաքի) մոտ գտնվող հրաշագործ համարվող մի աղբյուր է:

29 Քոֆր — աստվածահայհոյութուն, աստու դեմ խոսել, քնդհանրապես հայհոյանք, նախատինք:

30 Այս քառյակը համարվում է Արու-Ալի երն-Սենայինը:

31 Բնադիրը հավանորեն աղավաղված է:

32 Ֆերեյդունը Փիշղադյան հարստության VI թաղավորն էր:

33 Ջիհուն — Գեհուն (դրախտի դետերից մեկն է):

34 Մահմեդականները թողվածի շիրմի վրա դլխի կողմը յերկու աղյուս են դնում:

35 Շեյխ — կրոնապետ, առաջնորդ, պատկառելի ծեր:

36 Այս քառյակը դտնվում է նաև Ջալալ-եղ-դին Ռումիի դիվանում:

37 Պտտուն դմբիթ — յերկնակամար:

38 Վարազույր դործ է անվում կյանքը ծածկող վարազույրի — մահվան մտքով:

39 Ղորդ կամ Քեյ-Ղորդ և Թավուս պարսկական առասպելական շրջանի արքաներ են:

40 Պարսկական ավանդութունն ասում է, թե Ձամը (Ձամ-շեդը) մի ջամ (պղնձե դավաթ) ուներ, վորի մեջ նայելուց կարելի յեր տեսնել բոլորն, ինչ կատարվում է ամբողջ աշխարհում: Արդ դավաթն այլ խոսքով ամենադիտության սիմվոլն է:

41 Առաջին «գուռը» նշանակում է ցիռ (վայրի եշ), յերկրորդը — գերեզման:



42 Տէ՛ս 38-րդ ծանոթութիւնը:

43 Կուռք — Խայկամը դործ է ածու՛մ զեղեցիլուհու, պաշտելի մտքով:

Խաղըրը կամ Խեղըրը (աստվածաշնչի Յենովքը) հանդերձ-յալ կյանքում հալատացյալներին անմահական աղբյուրից ջուր է մատակարարում:

Խայկամը Գրիստոս անունը՝ դործ է ածու՛մ «լավ խմող», «քեֆ անող» մտքով, է նկատի ունենալով յերևի Կանա Գալիլիայում ջուրը գինու փոխարկելու առասպելը և ընդհանրապէս այն վիպութիւնը, վոր Գրիստոս ուտել-խմելուց չեք խուսափում:

44 Նովբուդ — նոր որ — անվանվում է նոր տարին:

45 «Ուդ» նշանակում է և՛ հարվէ, և՛ քամամնչայի նման մի յերթժշտական գործիք. այդ յերկու մտքով էլ դործ է ածված այստեղ վորպէս բառախաղ:

46 Բնադրում ուրուրի փոխարեն կկու յե, վոր կանչում է «կո՛ւ-կո՛ւ». պարսկերեն «քո՛ւ-քո՛ւ» նշանակում է և՛ «կո՛ւ-կո՛ւ» և՛ «ո՛ւ, ո՛ւր»: Խայկամն այս բառախաղով ուզում է ասել, թե կկուեն (հայերիս մեջ՝ բուն) վայում է ավերակների վրա՝ հարցնելով. «ո՛ւր է նախկին փառքը», այսինքն ամեն ինչ անցողական է:

47 Խայկամի ժամանակ «քիմիա» եյին կոչվում նաև զեղելը. այստեղ «քիմիա» ասելով Խայկամը հասկանում է զինի (իրև թե զինին զեղ է):

48 Մեղեխիկ (տերվողորմյա) գործածելը բարեպաշտութեան նշան է, վորով համբում են արտասանված աղոթքները: Խայկամը դա համարում է փարիսեցիութիւն:

49 Ամիր — իշխան, ազնվական, հրամանատար:

50 Խաղողի դուտար՝ այսինքն զինի:

51 Բնադրի մեջ — «Բաղդադ լինի, թե Բալխ» — այսինքն՝ ուր ուզում է լինի, ինչ ուզում է լինի:

52 Մահմեդականութիւնն ընդունում է, վոր յերկնքում կա մի տախտակ, վորի վրա նշանակվում է մարդու կյանքի ամբողջ ընթացքը:

53 Մահմեդականութիւնը յերկնքը յոթը հարկից բաղկացած է համարում:

54 Քաջան քաղաքում պատրաստվող («քաջի») սափորները հնուց է վեր հայտնի յեն վորպէս բրուտութեան զլուխ-դործոցներ. անտիկ սափորները շատ թանգ են դնահատվում այժմ:

55 Մահմեդականութիւնն ընդունում է, թե հանդերձյալ կյանքում Քուսեր անունով զեպից (աւվից, ավազանից, աղբյուրից) Մահմամադի փեսա Ալին զինի յե մատուցելու հալատացյալներին:

56 Աշխարհի տերը — բախտը:

57 Բառախաղ է شراب (շարար — զինի) և شراب (շարար — շար ջուր) բառերի:

58 Ավանդութիւն կա, թե Խայկամը ծառի տակ նստած խմելիս է լինում, փոթորիկ է բարձրանում, կոտրում ծառի ճյուղը, ընկնում զինու կուլայի վրա, վորը ջարդվում է, զինին թախվում. Խայկամն ասածու վրա զայբացած, վոր փոթորիկ սուաջացնելով թափեց իր զինին, զիմում է նրան «Գինու սափորը կտարեցիր» քառյակով: Ասոված Խայկամի վրա բարկանալով՝ նրա յերեսի կեքը սևացնում է: Յերբ աշակերտներն այդ բանը տեսնելով՝ հայտնում են իրանց ուսուցչին (Խայկամին), նա՝ «Այս աշխարհում ո՛վ չի մեղանշում» քառյակով սկսում է ասածուն նախատել, վորն իրավացի համարելով Խայկամի փաստարանութիւնը՝ սպիտակացնում է սևացրած յերեսը:

59 Խարդա — դարվիշ է կամ կրօնաշնչի վերնազգեստ:

Գոտր — բրահմինի գոտու մասին է խոսքը:

60 Այսինքն՝ յեթե կարողանան ինձ հիմարացնել: Այստեղ բառախաղ կա فرق (ֆարդ) բառից, վոր նշանակում է և՛ տարբերութիւն, և՛ դեմ (այն կողմը), և՛ գլուխ, և յերևի خروش (խորու-ըլբոց). և خروش (խորու-աքաղաղ) բառերի:

61 Գինու և ընդհանրապէս նուրբ գավաթները ծածկված են լինում Պարսկաստանում սովորաբար զորանից կամ յերբեմն վորևէ բանաստեղծից վերցրված վտանովորների քանդակով:



62 Սուլթանական թմբուկ խփելը — հաղթույթյունը հայտարարել:

63 Անմահ լինես: Խաղըրը (Յենովքը) և Յեղիա մարգարեն՝ ըստ աստվածաշնչի՝ կենդանի վերացել են յերկինք:

64 Ռամազան ամսին — մահմեդականներին մեծ պատին-ցերեկները ծոմ են պահում և ավելի՛ հաճախ նամազ (պարտադիր աղոթք)անում: Խալիֆան ալլա ծեսը համարում է իշախին հիմարութուն, նամազն՝ իշի սանձ, ծոմն՝ իշի դնչակալ: Ռամազանին հետևում է Շավվալ ամիսը, վոր համարվում է տոնի ամիս — ալլա:

65 Արզավան — մի խոշոր ծառ է, վորը նախ քան տերևակալելը շատ վաղ ծածկվում է բայ-մանուշակագույն մանր ծաղիկներին խիտ վնջերով, վորոնք առանց կոթի կպած են լինում ուղղակի հյուղերին կամ ծառի բնին և խիստ դեղեցիկ են, մանավանդ հետվից, վոր հրդեհի տպավորութուն են դործում:

66 Գր Ռոզենի հրատարակության մեջ ա՛յս վարիանը կա-

«Մի ձեռիս դորան, մյուս ձեռիս դավաթ, Մերթ մի սուրբ մարդ եմ, մերթ անսուրբ ու վատ, Այս դամբեթում վոչ հասուն, վոչ տըհաս, Վոչ լըրիվ մոսլեմ, վոչ էլ անհավատ...»

67 Գամու բերան տալ — կորցնել ամբիշտ:

68 Սեյեդ — տեր, իշխան, Մոհամմադի սահմին պատկանող:

Մոհամմադը Հաշեմի ցեղից էր:

69 Ղազել — սոնետ:

70 Տե՛ս 64-րդ ծանոթությունը: Ծարանը ուսմազանի նախորդ ամիսն է:

71 Մաղեմ և ընարեմ այն, ինչ վոր հաճելի յե:

72 Թաղի — բարակ (վորսի շուն):

73 Իր վոսկորն ուրիշի բաթին դարձալ. այսինքն իր ազատության հետևանքով ինքն ուրիշի ազատության դոհ դնաց: Սա մի եզրիբամմա յե հավանորեն վորեւե ժամանակակցի հասցեյին:

74 Նպիրբամմա յե վորոչ սուֆիներին հասցեյին, վորոնք

բարեպաշտ էյին ձևանում հին զղեսա հազնելով, ձեռներին հաշիշ և յերկու հաց բռնելով:

Ծերլի և Զոնեյդ բաղադրի ականավոր սուֆիներ էյին:

Քերլի Մաարուֆ — Քերլի թաղ — Բաղադրի աննշան թաղերից մեկն է, միևնույն ժամանակ հարբեցությունն առաքինութուն համարող բանաստեղծ հայտնի սուֆի Մոհամմադ Զոնեյդի մականունն է. «Քերլի-Մաարուֆ» յերգիծական բառախաղ է:

75 Բարեպաշտ են ձևանում:

76 Խոթան — Մանջուրիա:

77 Բաֆար — հեթանոս, անհավատ:

Եմամ (Թուրք արտարբույթյամբ՝ իմամ) — առաջնորդ:

78 Ռոսթամ — Շահնամեյի հերոսը, Զալի վորդին, ույթի սիմվոլ:

Թեյ-չաթամ կամ Հաթամ-Թայի, արաբական Թայի ցեղից, առատաձեռնության սիմվոլ:

79 Մոսալման — ուղղափառ (մահմեդական):

80 Գոհար — փոխարեբական մտքով — իմաստութուն. ծակված դոհար — հայտնված իմաստութուն:

81 Շահմաթ (шахматы) խաղի վրա հորինված բառախաղով Խալիֆան ուղում է ասել, թե սիրունի մի հայաջըր զսրություն տվալ սիրողին:

Մաթ մնալ — ապշել, հաղթվել, ուժից ընկնել (այս մըտքով դործ է անվում նաև հայ ժողովրդի բերանում, որինակ՝ Կարաբաղում):

82 Սանամ — սիրուհի, կուսք:

Աղիզ — սիրելի, հարզո:

83 Կտակ է: Ռամազան ամսին մահմեդական կրոնով ավելի՛ յե արգելված խմելը, քան յերբեկցե. բայց վորովհետև Ռամազանի ծոմը «հատուկ» է մարդուն, ուստի խալիֆը Ռամազանը համարում է մարդուն հատուկ ամիս: Տե՛ս 64-րդ ծանոթությունը:

83 Զարեթով (ծածկ) խաղի յառաժամով:

Ա. ԱՌԱՅԱՆ





## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Յջ	տող	տպված է	պետքն լինի
34	2	բարդ-եյակ	մարդ-եյակ
53	15-16	Դրախտը նախադուռն է մեր ըստփանքի: Դրժոխքը կայծակ հուրն է մեր գուր տանջանքի,	Դրժոխքը կայծակ հուրն է մեր գուր տանջանքի, Դրրախտը նախադուռն է մեր ըստփանքի:
75	1	ձմեռ առ	ձև առ
83	4	Ի՞նչ փույթ-քեզ կու- տի մըրջուհը շիրմում, Թէ դայլը դաշտի...	Ի՞նչ փույթ-մըրջո՞ւհը՛ շիրմում, Թէ դայլը դաշ- տում քեզ կուտի...
128	4	Մենք խըմենք	Մենք ել խըմենք





115  
115  
115  
115

ՀՀ Ազգային գրադարան



NL0312462



270

9450

1880 2nd Ave  
1st Ave

